

16 (339)  
31.05.2013

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապուրիսին եւ գիրար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՍԱՐԴԱՐԱԿՄՈՍ-95

## ՊՍՏՄԱԿԱՆ ՊԱՅԻ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆՈՎ

Անկախ այն բանից, թե ինչպես է ստուգաբանվում «մայիս» բառը, հայ ժողովրդի համար այն ուղղակիորեն ասոցացվում է հաղթանակի հետ, որովհետև մայիս ամսում են տեղի ունեցել Ավարայրի և Սարդարապատի փառավոր ճակատամարտերը, Շուշիի ազատագրումը... Այդ հաղթանակների պատմական արժեքը գաղափարական հիմքով թեպետ նույնն է, սակայն յուրաքանչյուր առանձին ճակատամարտ ունի ուրույն պատգամ ու խորհուրդ:

Մենք միշտ շեշտել ենք Ավարայրի բարոյական արժեքը, Սարդարապատի ազգափրկիչ դերն ու Շուշիի՝ ոգեշնչումի մեծ ուժը: Հիշյալ գործոններն, իրոք, ամբողջացնում են հայ ժողովրդի ազգային հպարտությունը և վերստին փաստում մոխիրներից վերհառնելու մեր կամքը: Միևնույն ժամանակ, մայիսյան հաղթանակների մեջ Սարդարապատը կարելի է հատկանշել որպես հայոց պետականության վերականգնման հիմք ու պատեհություն:

1918թ. մայիսի 28-ին աշխարհի քարտեզի վրա կրկին ի հայտ եկավ Հայաստան պետությունը: Ցեղասպանության մղձավանջներից դեռ չթոթափված, շուրջ 700 տարի պետականությունը կորցրած հայության համար դա նման էր հրաշքի: Բայց հրաշքը միայն հեքիաթներում է լինում. Առաջին Հանրապետության ծնունդը կենաց ու մահու կռվի արդյունք էր: Պատմությանը քաջ հայտնի է, որ հստիկոսային Ռուսաստանի նոր ղեկավարությունը, հրաժարվելով պատմազանից՝ հետագա մասնակցությունից, իր գործերը դուրս էր բերել Կովկասյան ռազմաճակատից՝ հայերին մեծակ թողնելով թուրքական կանոնավոր բանակի դեմ: Այդ պայմաններում ինքնապաշտպանությունն այլընտրանք չուներ, և հայկական զորախմբերին հաջողվեց Ղարաբաղի շրջանում, Բաշ-Ապարանի ու Սարդարապատի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում ջախջախիչ հարվածներ հասցնել թուրքական զորքերին: Այդով իսկ կասեցվեց նաև թուրքական բանակի մուտքը Անդրկովկաս:

Մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը լուծարվեց, և Ադրբեյջանն ու Վրաստանը հայտարարեցին իրենց անկախության մասին: Այնուհետև, անկախ Հայաստանի Հանրապետություն ստեղծման մասին հայտարարությանը հանդես եկավ Հայոց ազգային խորհուրդը. «Անդրկովկասի քաղաքական ամբողջականության համար լուծույնով և Վրաստանի և Ատրաբեյջանի անկախության հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց ազգային խորհուրդը իրեն յայտարարած է հայկական զաւառներու գերագոյն և միակ իշխանութիւնը»: Դա պատմական պահի հրամայականն էր:

Ինքնին պարզ է, որ եթե չստեղծվեր Առաջին Հանրապետությունը, մի քանի տարի անց կազմավորված հստիկոսային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմում Հայաստանը ինքնուրույն հանրապետության կարգավիճակ չէր ունենա՝ դրանից բխող աղետալի հետևանքներով: Եվ պիտի արժանին մատուցել բոլոր նրանց, ովքեր ծանր պայքարի գնով կարողացան թուրքական ճիրաններից փրկել մեր բզկտված հայրենիքի գոնե այդ հատվածը, որի վրա այսօր հպարտ ծածանվում է վերակերտված Հայաստանի Հանրապետության եռագույնը:

Սարդարապատի մարտերում կերտված Հայաստանը բոլոր հայերին է, որ փարոսի նման միշտ կանչում է ի սփյուռս ցրված իր զավակներին: Լսենք հայրենիքի ծայրը նույն այն զանգերի դողանքով, որ 95 տարի առաջ հնչել է Սուրբ Էջմիածնի Մայր տաճարից՝ արծազանքելով շրջակա հայկական գյուղերի եկեղեցիների զանգերի ելևէջներով:

...Շուշին ուղղակի շարունակությունն էր Սարդարապատի: Անկասկած, կլինեն նորանոր հաղթանակներ՝ Մուշ, Սասուն, Ղարս և այլ կարոտաշունչ անուններով: Եվ որպեսզի այդ հաղթանակները մարմնավորվեն՝ պետք է որ զալիք սերունդները լավ սերտեն հայրենափրկության անփոփոխ դասը: Այն պարզապես մոռանալ չի կարելի:

Շնորհավոր՝ ու մեր հայրենիքի վերհառնումի տոնը:

«ԼՍՐԱՐԱՐ»

## ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ, ՆՈՐԻ ԿԱՆՉ



Վերջին զանգ, վերջին դաս, տարեվերջյան հանդես... Սովորաբար այսպիսի (գուցեն՝ մի քիչ ուրիշ) արտահայտություններով է ամփոփվում շրջանավարտների հրաժեշտը դպրոցական կյանքին, ավանդույթ, որ հատուկ է շատ երկրների, և դժվար է ասել, թե երբ է սկզբնավորվել:

Քրիստոնեությունը աշխարհում առաջինը պետականորեն ընդունած և այնուհետև սեփական գիր ստեղծած և կրթության ու գիտության ճրագը բարձր բռնած հայերիս համար, որ վաղվերում վարդապետներ (ուսուցիչներ) էին պատրաստում՝ երկիրը հոգևոր լույսով լցնելու համար, անկասկած, ավանդույթը գալիս է վաղնջական ժամանակներից: Կարողալով և իմանալով, թե մեր առաջին աշակերտներից Կորյունն ինչպես է ծնրադիր օրհնություն առնում Առաջին Ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցից, բնականաբար, նաև երախտագիտություն հայտնում, հասկանում ես, որ դպրամոցի և Ուսուցչի՝ լույսի սերմնացանի նկատմամբ աշակերտի ակնածանքը, հարգանքը ու նաև նրա՝ ամբողջ կյանքում իր սանի հանդեպ ուշադրությունը, դարերի փորձ ունի:

Վերջին զանգը, ըստ էության, այս սիրո խտացումն է: Ժամանակի ընթացքում ձևի առումով այն փոփոխություններ է կրել, բայց բովանդակությունը նույնն է մնացել: Մասնակցեք ցանկացած կրթօջախի տարեվերջյան հանդեսին ու ամեն տարի մասնակցեք և կհամոզվեք, որ նույն հուզմունքն ու ուրախությունն է, տոնական եռուզեռը, բայց և՛ տարբեր:

Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը չնայած տարիքով այնքան էլ մեծ չէ, բայց հարուստ կենսագրություն ունի իր ձեռքբերումներով: Այս տարի այն թողարկեց իր 24-րդ շրջանավարտներին, հայկական և ռուսական երկու դասարաններում ընդգրկված 43 աշակերտներին:

Ուրի՞շ է նրանց թախծոն ու խանդավառությունը: Ոչ, ամեն ինչ նույնն է, ինչպես մյուս դպրոցներում: Տոնականորեն զարդարված դասարաններ ու դահլիճ, հուզված ուսուցիչներ ու ծնողներ, ջերմ բարեմաղթանքներ, ծաղիկների առատություն և ամենասիրուն ծաղիկներն իրենք շրջանավարտները՝ կրկին ու պարզ հանդերձով, հայացքներում

խոհեմություն, հասունություն, կարևորի գիտակցում: Արցախի օրհներգի հնչյունների ներքո ներս են բերվում հանրապետության ու դպրոցի դրոշները, և սկսվում է հանդեսը: Փոխտնօրեն Սուսաննա Մկրտչյանի բացման խոսքին հետևում են հայրենասիրական երգն ու պարը: Դահլիճ են մտնում արցախյան Տատիկն ու Պապիկը՝ իրենց օրհնանքը տալու շրջանավարտներին և պատգամը՝ չմոռանալու տղաներին, որոնց կյանքի գնով խաղաղ բացվում են մեր արշալույսները: Դպրոցի տնօրեն Սուսաննա Ներսիսյանը վստահ է, որ թողարկում են արժանավոր սերունդ՝ գիտելիքներով օժտված, քանզի ստացել են ճիշտ դաստիարակություն՝ հիմքում ունենալով հայրենասիրական խոր զգացումներ:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության անունից ջերմ խոսք ասաց փոխնախարար Արմեն Սարգսյանը, ով նաև շրջանավարտի ծնող է: Նա երջանիկ համարեց կյանք մտնող այս սերունդին, քանզի ծնվել ու մեծացել է ազատ ու անկախ երկրում. «Սակայն չէի ասի, թե դուք անհոգ սերունդ եք, քանի որ հաղթանակը պահպանելը, որն ավելի դժվար է, քան այն ձեռք բերելը, ձեր ուսերին է»:



Կարծես երեկ էր, երբ դպրոցական առաջին զանգի դողանքների ներքո այս մանկանց համար բացվեցին դպրոցի հյուրընկալ դռները: Տասնմեկ տարի անց, դպրոցական վերջին զանգի ելևէջները սրտում, նրանք կրկին միասին կանգնել են կյանքի աստիճաններին: Հիմա արդեն հասունության դռներն են բացվել նրանց առջև, և թող Մեծ կյանք տանող ճանփան միշտ կանաչ լինի...

ՇՐՋԱՆԱԿԱՐՏ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՇԱԹԱՂՈՒՄ

Քաշաթաղի շրջանում 2012-2013 ուստարում 53 հանրակրթական դպրոցներում սովորող 1700-ից ավելի աշակերտներից 95-ը դարձան շրջանավարտներ, և 37-ում տեղի ունեցան Վերջին զանգի արարողություններ: Ամենաշատ շրջանավարտ՝ 11 հոգի, որից 6 տղա, 5 աղջիկ, ունի Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցը: 6-ական շրջանավարտ ունեն Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2, Մոշաթաղի և Գետամեջի միջնակարգ դպրոցները: Առավելագույն արդեն տոնական էր շրջկենտրոն Բերձորը: Սկզբում տեղի ունեցավ հ. 1 դպրոցի շրջանավարտների ելույթը: Այստեղ արդեն 19-րդ շրջանավարտները նույն բեմից ծաղիկներով ու գույնզգույն փուչիկներով զարդարված, ուրախացրին ծնողներին, ուսուցիչներին, հյուրերին, դիմեցին երախտագիտության, ինչ-որ տեղ նաև զոջունի խոսքերով: Անցկացրին վերջին դպրոցական դասը՝ լինելով և՛ ուսուցիչ, և՛ աշակերտ: Եղան երգեր, պարեր, ուրախ հունձրեր: Աշակերտները վերհիշեցին դպրոցական տարիները, որ թռան շատ արագ: Շրջանավարտներին իր օրհնանքը տվեց շրջանի հոգևոր հովիվ Հայր Աթանաս Վարդապետը՝ մաղթելով բարին, որ Աստված հաջողություն տա բոլորին: Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուր Մխիթարյանը շրջանավարտ աղջիկներին ծաղիկներ նվիրեց և բարեմաթանքի խոսք ասաց՝ կարևորելով այն, որ մեր շրջանի երեխաները միշտ էլ բարձր են պահել Քաշաթաղի անունը: Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանն ուրախությամբ և հուզմունքով նշեց, որ արդեն որերորդ անգամ է՝ կրկնվում է այս գեղեցիկ միջոցառումը, և ներկա շրջանավարտներին ցանկացավ բարին: Բերձորի հ. 2 միջնակարգ դպրոցի շրջանավարտները նույնպես ներկա էին միջոցառմանը և ոգևորում էին իրենց ընկերներին:



Այնուհետև կայացավ 2-րդ դպրոցի շրջանավարտների Վերջին զանգը Բերձորի մանկապարտեզի դահլիճում: Այստեղ նույնպես ուրախ ու լավ տրամադրություն էր տիրում: Մոտ մեկ ժամ 6 շրջանավարտները և նրանց աջակիցները հաճելի ու անմոռանալի պահեր պարզակեցին ներկաներին: Դպրոցում արհմիության նախագահ Գայանե Մեջլումյանը, իր հերթին և շնորհավորեց նոր կյանք մտնող մեր պատանիներին: Վերջում երկու դպրոցների շրջանավարտները համատեղ ելույթ ունեցան՝ հավաստիացնելով, որ հուսախաբ չեն անի իրենց ծնողներին, ուսուցիչներին, շրջանի ղեկավարությանը, ընկերներին: Շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը և աշխատակազմի կառույցների ներկայացուցիչները մասնակից եղան համայնքներում կայացող վերջին զանգի արարողություններին: Որախալ է, որ Գանձա համայնքի Բազմատուս գյուղի նորաբաց դպրոցում նույնպես մեկ շրջանավարտ կա, և այնտեղ էլ կայացավ Վերջին զանգի արարողություն: Ըստ շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի տեղեկության՝ այս սեպտեմբերին շրջանի դպրոցները կհամալրեն 200-ից ավելի առաջին դասարանցիներ. այսինքն՝ աշակերտների թիվը կավելանա մոտ հարյուրով:

Ջոհրաբ ԸՆԶՈՑԱՆ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ, ՆՈՐԻ ԿԱՆՉ

1 Ինչպես նրանք առավելություն ունեն իրենց նախորդների նկատմամբ՝ ծնված լինելով անկախ ու ազատ երկրում, այնպես էլ տարիներ անց նրանց զավակները քայլ առաջ կլինեն իրենց ծնողներից՝ իրենց այդ տոնը նշելով աշխարհի բոլոր երկրների կողմից արդեն ճանաչված Արցախի Հանրապետությունում: Նման ցանկություն ու մաղթանք հայտնեց փոխնախարարը, որը բոլորի սրտից է բխում:

Երկնագույն անուրջների մարմնավորման մի ձև էր շրջանավարտների՝ 20 տարի անց պատկերացրած հանդիպումը: Ասպարեզում են այսօրվա շրջանավարտ՝ երկրի վաղվա նախագահը, վարչապետը, քաղաքական, տնտեսական ու մշակութային գործիչը՝ նոր մտածողությամբ: Բայց մինչ այս ճանապարհին հասնելը պետք է կարողանալ հաղթահարել «բարա-եզե»-ին՝ միասնական քննությունները: Քննություն հանձնողները բոլոր միջոցներն օգտագործում են՝ ծածկաթերթիկ, բջջային հեռախոս, հուշեղ, անգամ կաշառքը՝ բան դուրս չի գալիս: Մնում է մի ելք՝ սեփական խել-

քը: Ահա այսպես, ամբողջ համդեսի ընթացքում հունորային համարներով, կեսլուրջ-կեսկատակ, գեղեցիկ երգ ու խոսքով ուսումնական երկարուձիգ տարիների զգացմունքներին ազատություն տված՝ շրջանավարտներն արտահայտում էին իրենց սերն ուսուցիչների, ծնողների, դպրոցի, հայրենիքի հանդեպ: Ու նույնը լսում նրանցից:

Եվ հավատում ես, որ երկրի վաղվա տերերը նրանք են լինելու և ամրապնդելու են պատերի ու ծնողների ձեռք բերած նվաճումները:

Իսկ դպրոցական վերջին զանգի դուրսըները մնալու են նրանց հուշերում, և դպրոցը լինելու է այն լուսավոր կետը, որին միշտ ուզենալու են վերադառնալ՝ առնելու մասնկության կարոտը:

Եվ միանալով բազմիցս հնչած՝ տարիներով սրբագործված լավագույն մաղթանքին՝ մենք էլ ասում ենք.

- Կանաչ ճանապարհ ձեզ, սիրելի շրջանավարտներ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԻՆԵՔ ԱՆՄՈՒՐ ՃԱՏՓՈՐԴ

Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղի հիմնական դպրոցն այս տարի հրաժեշտ է տալիս իր երկու շրջանավարտներին:

Երախտագիտության ջերմ խոսքերին, խոստումներին, երգ ու պարին հաջորդեցին հուժկու ու ծիծաղաշարժ դրվագների ցուցադրումն ու կենդանի ներկայացումը:

- Թյուր տպավորություն կա, թե մանկության, դեռահասության տարիներն անցողիկ են, ոչ կարևոր, երկրորդական, սակայն ես այսօր ուզում եմ վկայել, որ դրանք մարդու կյանքի ամենաեական, անմոռաց ու կարևոր ժամանակահատվածն են, ապագայի թռչնի թևերը, ճիշտ կենսակերպի հիմքը: Այսօր բոլոր հասուն մարդիկ մանկանում են, ծնողները՝ հրճվում, միջավայրը շնչում է բարի հիշողություններով: Գիշտ է, կյանքն ինքնին գրավիչ է, հրապուրիչ, բայց մանկությունը կենսարար աղբյուրն է կյանքի: Վերջին զանգը բոլորի համար նորացման և իր ներսը նորովի մայելու առիթ է, - դիմելով շրջանավարտներին՝ ասաց դասուղեկ Անյուտա Հովսեփյանը:

Դպրոցի տնօրեն Գ. Վերդյանն ամփոփեց աշխույժ և ուսուցանող այս միջոցառումը, բարի երթ մաղթեց շրջանավարտներին՝ խորհուրդ տալով գիտակցված կատարել բոլոր քայլերը, լինել երախտագետ, պարտաճանաչ, ջանասեր, դպրոցի ու գյուղի անունը բարձր պահող, գյուղը շենացնող, նոր կյանքի ճանապարհին աննոլոր ճամփորդ:

Շրջանավարտներին բարեմաղթանքի խոսքեր ասաց և հուշանվերներով շնորհավորեց կենսաբանության ուսուցչուհի Ա. Սուլեյմանյանը:

Միջոցառումն ավարտվեց ազատ ծրագրով՝ եվրոպական և ազգային պարերով:

Դպրոցը պարում էր, մանկությունն ու հասունությունը միահյուսվել էին...

Անահիտ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՁԵՋ ԲԱՐԻ ԵՐԹ

Ձեր կյանքի 17-րդ գարունն է, ընդամենը 17 տարեկան եք դուք: Քանի՜ այդպիսի գարուններ դեռ կան ու կանցնեն, բայց 2013թ. մայիսի 24-ը՝ գարնանային ոչ սովորական օրը, դուք չեք մոռանա, իմ սիրելի՝ շրջանավարտներ:

Ծիածաններ են ձեր երազանքներն այսօր, Բազմերանգ կանաթ են կապել անուրջները ձեր, Եվ տենչում են գտնել գոնե մի հնար, Որ ձեր իղձերն իրականանան այս ամառ... Ամեն մեկդ մի-մի գարուն, Ամեն մեկդ՝ արշալույսի մի վառ շող, Գարուն, արևիդ ջերմությունը տուր իմ սանդիկ, Վերջին զանգի տոնի առթիվ և առհավետ... Իմ սիրելի՜ սաներ:

Եկել է հրաժեշտի պահը, և հուզմունքից դողդողում է իմ գրիչը՝ չենթարկվելով ինձ: Ձեն ենթարկվում մտքերս: Ակամա հիշում եմ 2006 թվականը, երբ առաջին անգամ մտա դասարան, և դուք՝ հինգերորդի փոքրիկներդ, վախվորած աչիկներով դիմավորեցիք ինձ: Մենք իրար չէինք ճանաչում:

Դժվար էր սկզբում, բայց մենք հաղթահարեցինք այդ դժվարությունները: Դժվար էր նաև վերջին երկու տարիներին, քանզի ուսումնական գործընթացում շատ անհայտներ կային, որոնք լուծելու համար պատրաստի բաղադրատոմսեր չունեինք: Մյուս կողմից էլ, մի քիչ «խանգարում էր» նաև մեր տարիքային տարբերությունը: Ինչևհետև: Միասին եկանք

հասանք եզրագծին: Տոնին կհաջորդեն սովորական հոգեբերով լեցուն օրերը, կկարոտենք մանկական և դպրոցական ամհոգ օրերին, ձեր չարածի արարքներին, բայց ավա՜ղ...

Ետ չեն գա, ինչքան էլ դուք կամենաք: Եթե ձեր երազանքը դպրոցն ավարտելու հետ կապված իրականություն է, դպրոցական օրերն արդեն դառնում են հուշեր:

Կջնջվեն իմ և ձեր հիշողություններից այն ամեն փոքրիկ վիրավորանքները, դժվարին կամ վատ պահերը, որոնք մեզ խանգարում էին, և կհիշենք միայն լավը, պայծառը և ճշմարիտը:

Յոթ երկար ու ծիգ տարիներ մենք մի փոքրիկ ընտանիք դարձանք, աշխատեցինք միասին, քայլեցինք մի ճանապարհով, որը միավորեց մեզ: Դա հասունացման ճանապարհն էր: Դա այն կամուրջն էր, որ իրար է կապում մանկությունն ու երիտասարդությունը: Դա ուսումնառության շրջանն էր: Ունեցանք շատ խնդիրներ, շատերին մենք չհասկացանք, բայց մեզ էլ շատերը չհասկացան: Ձեզ թվում էր, թե ես ձեզանից սովորելու բան չունեմ, և զարմանում էիք, երբ ես դա ասում էի: Ես հիանում էի ձեր համակարգչային ունակություններով, սպորտային հետաքրքրություններով և մրցումներին մասնակցելու պատրաստակամությամբ

(նույնիսկ մայիսի 14-20-ը մասնակցեցիք հանդբոլի մրցումներին), բջջային հեռախոսների հետ կապված «մասնագիտական» իրազեկությամբ: Եվ ես այնպես երազում էի, որ նույն հետաքրքրությունները լինեին ուսման նկատմամբ: Չնայած երբ ցանկանում էիք, բոլորից էլ լավ էիք հանդես գալիս: Հիշո՞ւմ եք ընկեր Մայիլյանի կազմակերպած մրցույթը,



որտեղ գրավեցիք առաջին տեղը կամ «Դեհ, տղաները», նորից՝ առաջին:

Իսկ այս ուստարում մեր Արմինեն շրջանային օլիմպիադայում պատմությունից գրավեց առաջին տեղը: Թող այդպիսի հաջողություններ ձեզ ուղեկցեն միշտ, և միշտ զգաց դրանց

քաղցրությունը: Դրանք քաղցր են, երբ ձեռք են բերվում դժվարությամբ:

Ես վստահ եմ, որ իմ 10 շրջանավարտներն անցնելիք կյանքի ուղին կդարձնեն հետաքրքիր և վատ արարքներ թույլ չեն տա, ինձ հուսախաբ չեն անի: Ո՛ր է թե մեծերը կարողանային ձեզ նման ընկերություն անել, իրար վստահեին, դժվար պահերին իրար սատար կանգնեին...

Մի քանի Արմինե, Նամար, Հայկ, Նահիրիկ, Արայիկ, Շուշան, Ջոյա, Ալբերտ, Կարեն և Արսեն, ամենայն հաջողություններ ձեզ, եղեք շիտակ, ազնիվ, ճկուն, նպատակասլաց, խիզախ, արդարացի, անկոտրում: Պահպանեք ձեր առողջությունը, որն ամեն ինչի գրավականն է: Ուսանողական կյանքում սպունգի նման ներծծեք գիտելիքներ: Ձեռք բերեք կայուն գիտելիքներ և դարձեք լավ մասնագետներ:

Երբեք հիասթափություն չապրեք և չհանդիպեք վատ մարդկանց ու վատ արարքներ թույլ չտաք, կարողանաք ամեն պահի մարդ լինել ու մարդ մնալ: Լինեք այնպիսին, որ ես հպարտությամբ ասեմ.

- Ես նրա դասուղեկն եմ եղել, նա իմ սանն է, նա իմ դասարանից է:

Միշտ ձեր դասուղեկ՝ Սարիկյան ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Իվանյանի միջև. դպրոց

ՇՆՈՐԱՆԴԵՍ

ՀԱՃԵԼԻ ՆՎԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Մայիսի 23-ին Արցախում նշվեց Լրագրողի օրը: Արդեն չորրորդ տարին է՝ ԼՂՀ կառավարության որոշմամբ այդ օրը պետական տոնացույցում նշվում է որպես Լրագրողի մասնագիտական տոն օր:

2009թ. մայիսի 23-ին Արցախի ժուռնալիստների միության կազմակերպած միջոցառման ժամանակ, նվիրված Արցախում առաջին պարբերականի՝ «Հայկական աշխարհի» լույսընծայման 135-ամյակին, առաջարկություն եղավ հենց այդ օրն արժևորել մասնագիտական տոնի նշումով: Առաջարկը լայն ընդունելություն գտավ, և հիմք ընդունելով լրագրողների այս ցանկությունը, Արցախի ժուռնալիստների միությունը պաշտոնապես դիմեց կառավարությանը: Եվ ահա 2010թ. ապրիլին գործադիրի որոշմամբ այդ օրը մտավ պետական տոնացույց:

Իրենց մասնագիտական տոնին հաճելի անակնկալ մատուցեց ժուռնալիստների միությունը. անցկացվեց նորահրատարակ «Լրագրողական հանրագիտակի» շնորհանդեսը, որը տեղի ունեցավ «Արմենիա» հյուրանոցի խորհրդակցությունների դահլիճում:

Բացելով միջոցառումը՝ միության նախագահ Կիմ Գաբրիելյանը նախ շնորհավորեց գործընկերներին մասնագիտական տոնի առթիվ: Կ. Գաբրիելյանի բնորոշմամբ՝ ԼՂՀ-ում չորրորդ իշխանության ներկայացուցիչների անձնամեծ նվաճումը կարելի է համարել լրագրողական համերաշխությունը:

Բանախոսը միաժամանակ ներկայացրեց «Լրագրողական հանրագիտակի» ստեղծման պատմությունը: Ըստ ժՄ նախագահի՝ նման ծավալուն տեղեկատուի ստեղծման գաղափարը ծնվել է անցյալ տարվա գարնանը՝ ժՄ վարչության ճիստի ժամանակ: Քանի որ մինչ այդ լրագրողական կազմակերպությունը երկու տեղեկատու էր հրատարակել (2003թ. և 2009թ.), ուստի նպատակահարմար գտնվեց ստեղծել հանրագիտարանային ձեռնարկ, որում ներգրավված լինեն վերջին շուրջ 140 տարում Արցախում լրագրողական գործունեություն ծավալած կամ այս բնագավառին առնչված անձանց կենսամատենագիտական տվյալները: Այդ նպատակով ստեղծվեց գիտախմբագրական խորհուրդ, որի նախագահ նշանակվեց ժՄ վարչության անդամ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիեր Զարուբյանը, իսկ պատասխանատու խմբագիր՝ ժՄ վարչության նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանը:

Նկատենք, ժուռնալիստների միությունը անցած տարիներին հրատարակել է նաև «Արցախի պարբերական մամուլի պատմություն» (1874-2009թթ.) և «Չճանաչված երկրի լրատվությունը» գիտատեսական ձեռնարկները: Եվ «Լրագրողական հանրագիտակը», ըստ էության, ոչ միայն այս աշխատանքների լրացումն է, այլև վերջին 140 տարում Արցախի լրագրողական ներուժի յուրօրինակ ամփո-



վումը: Կ. Գաբրիելյանը հորդորեց գործընկերներին մանրամասն ուսումնասիրել ձեռնարկը և բացթողումներ նկատելու դեպքում անպայման գրավոր իրազեկել գիտախմբագրական խորհրդին:

Անշուշտ, ծանր աշխատանք էր՝ հավաքել, ճշտել, խմբագրել 447 լրագրողի կենսագրական տվյալները, հատկապես որ, նրանց թվում քիչ չեն այնպիսիք, որոնց մասին արխիվում ժխտ տվյալներ են պահպանվել:

Այդ դժվարությունների մասին հանգամանալից ներկայացրեց գիտախմբագրական խորհրդի նախագահ Սիեր Զարուբյանը: Նրա խոսքով՝ նախապես հարցաթերթիկներ են բաժանվել հնարավոր հասցեատերերին, որոնք առաջվել են ինչպես էլեկտրոնային փոստով, այնպես էլ հանձնվել են ձեռամբ: Օգտագործվել են տարբեր հանրագիտարաններ, Հայաստանի ազգային արխիվի և «Կաճառ» գիտական կենտրոնի ֆոնդերի նյութերը, համացանցից ու պարբերական մամուլից քաղված տեղեկություններ: Մ. Զարուբյան-

յան այս աշխատանքը գնահատեց որպես բավարար տվյալներով բազա հետագա ուսումնասիրողների համար՝ չբացառելով «Հանրագիտակի» վերատպության դեպքում անհրաժեշտ լրամշակումները:

«Լրագրողական հանրագիտակի» մասին իրենց կարծիքն արտահայտեցին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովիկ Մուսայեյանը, ԼՂՀ Աժ մամուլի ծառայության պետ Միքայել Հաջյանը, պատգամավոր, լրագրող Վարդգես Բաղդյանը, Արցախի հանրային հեռուստատեսության խորհրդի նախագահ Նորել Գասպարյանը, ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչության պետ Մարսել Պետրոսյանը, «Վեստ-Նիկ» ռուսալեզու հաղորդաչարի հեղինակ և վարող Սեյրան Կարապետյանը, Ասկերա-ճի «Բերդ» շրջանային թերթի խմբագիր Վալերի Պետրոսյանը և ուրիշներ:

Պրոֆեսոր Հ.Մուսայեյանը մասնավորապես ասաց, որ ծանրակշիռ գործ է կատարվել հատկապես գիտաուսումնական նպատակներով օգտագործելու առումով: «Հանրագիտակը» արժեքավոր տեղեկություններ է պարունակում ոչ միայն տվյալ անձերի մասին, այլև նրանց ապրած ժամանակները բնութագրող գործընթացների վերաբերյալ: Նա հատկանշեց ձեռնարկի հեղինակների բարեխղճությունն ու պատասխանատվությունը կատարված աշխատանքի նկատմամբ:

Մ. Հաջյանի գնահատմամբ՝ «Հանրագիտակը» հսկայական նյութեր է պարունակում ոչ միայն արցախաբնակ, այլև Արցախից դուրս ապրող և լրագրողական գործունեություն իրականացրած՝ ծագումով արցախցի մի շարք մտավորականների մասին: Շատ անուններ անգամ անծանոթ են ընթերցողին, ինչը միանգամայն նոր լույս է սփռում Արցախի մեղիապատմության վրա:

Մ. Պետրոսյանն իր խոսքում ասաց, որ գր-

քի բազմաթիվ առավելությունների մեջ նկատելի չեն աննշան բացթողումները: Կարևորն այն է, որ առաջին անգամ ստեղծվել է մի գիրք, որտեղ ներառված են անցյալն ու ներկան, և լավ հիմք է ստեղծված հետագա լրամշակումների համար: Շարունակելով գործընկերոջ այս միտքը՝ Ս. Կարապետյանն իր հերթին նշեց, որ «Հանրագիտակի» հեղինակների հարտարած աշխատանքն արժանի է դրվատանքի:

Ս. Գասպարյանի կարծիքով՝ կարելի էր մի քիչ էլ ուշացնել տպագրությունը՝ վերջնական համապարփակ և ավելի լավ դիզայնով տպագրելու համար: Ի պարզաբանումն ասվածի՝ ժՄ վարչության նախագահն ասաց, որ եթե հիմա չհրատարակվեր «Հանրագիտակը», կարող էր ժամանակի ընթացքում կորցնել իր հրատարակությունը: Խնդիրը պարզապես եղել է ստեղծել «Հանրագիտակի», այսպես կոչված, աշխատանքային տարբերակը, որի վրա էլ պետք է իրականացվեն հետագա լրամշակումները՝ վերջնական տեսքով և ավելի լավ դիզայնով: Ի դեպ՝ Կ. Գաբրիելյանը միաժամանակ տեղեկացրեց, թե ինչու է ձեռնարկն անվանվել «Լրագրողական հանրագիտակ»։ «Մենք ոչ թե հավանական ենք հանրագիտարանային աշխատության, այլ նպատակ ենք դրել շահագրգիռ հանրության համար ստեղծել համապատասխան տվյալների մի շտեմարան, որը կներկայացնի արցախյան լրատվադաշտի հայտնի և անհայտ անուններ: Հետագա համալրումները, թերևս, կարող են ձևավորել այն պահանջները, որոնք բխում են հանրագիտարանի գիտական չափանիշներից»: Ընդհանուրս մասնակիցները, շնորհակալություն հայտնելով Արցախի ժուռնալիստների միությանը և մասնավորապես, «Հանրագիտակի» հեղինակներին՝ նման ուշագրավ ձեռնարկման համար, պատրաստակամություն հայտնեցին հետագա հրատարակություններ պատրաստելիս հնարավորինս նպաստել նոր տվյալների հայթայթման և նոր անունների հայտնաբերման աշխատանքներին: Եթե փոքրաթիվ խմբով հնարավոր է եղել այսպիսի ծավալուն աշխատանք իրականացնել, ապա բոլորի միասնական ջանքերով կարելի կլինի ստեղծել անթերի, գիտակցորեն հագեցած և Արցախի մշակույթի պատմությունն արժևորող լրագրողական հանրագիտարան:

Սեփ. լրատվություն

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ԿԵՆՉՈՒՐՈՒԻ» ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մայիսի 31-ին Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային մրցույթի արդյունքների ամփոփումը և մրցանակների հանձնումը: Հիշեցնենք, որ մրցույթը կայացել էր ապրիլի 4-ին, և ըստ ժամանակացույցի՝ մրցանակաբաշխությունը նախատեսված էր մայիսի վերջին:

Ներկայացել էին մրցույթին մասնակցած դպրոցների ներկայացուցիչներ, հաղթած երեխաները, ծնողներ: Նրանց ողջունեց և շնորհավորանքի խոսք ասաց ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը:

Արդյունքները հանգամանալից ներկայացրեց «Այբ» կրթական հիմնադրամի միջազգային դպրոցական մրցույթների ծրագրի ղեկավար Շուշան Կարապետյանը: Նշենք, որ այդ շարքում անցկացվում է «Ռուսական արջուկ» լեզվաբանական մրցույթը, որին մասնակցում են նաև Արցախի դպրոցականները, և «Պատանի քիմիկոս» համահայկական մրցաշարը՝ բարձր դասարանցիների շրջանում: Նպատակ կա ներգրավել նաև Արցախը:

Այս տարին հորելյանական է հայկական «Կենգուրուի» համար: 20 տարուց ավելի ամբողջ աշխարհում անցկացվող՝ «Մաթեմատիկա» բոլորի համար» այս մրցույթը, որին մասնակցում են ավելի քան 50

երկրների շուրջ 7 մլն երեխաներ, Հայաստանում առաջին 5-ամյակն է նշում: Արցախում, չհաշված փորձնական մրցույթը, «Կենգուրուն» երեք տարի է, որ անցկացվում է: Այն փաստը, որ 3-12-րդ դասարանների սովորողների շրջանում անցկացվող այս մրցույթում մասնակից դպրոցների և աշակերտների քանակով աճ է արձանագրվում, խոսում է այն մասին, որ մրցույթը հետաքրքիր է, ծառայում է իր նպատակին՝ գրավիչ ու հետաքրքիր դարձնել մաթեմատիկան: Այս տարի Հայաստանից և Արցախից 39214 աշակերտ է մասնակցել մրցույթին, որոնք ներկայացնում էին 960 դպրոց (48-ը՝ Արցախից): Ը. Կարապետյանի խոսքերով՝ նրանցից 1341-ը արժանացել են մրցանակների: Ի դեպ, նրանց թիվն էլ է աճել՝ նախորդ տարվա համեմատությամբ՝ 140-ով: Աճել է նաև լավագույն արդյունքներ գրանցած երեխաների թիվը. անցյալ տարի 485 էր, այս տարի՝ 559: «Կենգուրուի» առանձնահատկությունն այն է, որ հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին մասնակցել, ինչի համար անհրաժեշտ է ունենալ տրամաբանություն, խնդիրները լուծելու համար ոչ ստանդարտ մտածողություն: Մատչելիության հետ մեկտեղ այն ունի նաև իր դժվարությունները, որովհետև խնդիրների լուծման համար տրվող ժամանակը սահմանափակ է: Բայց այդ դժվար-

ությունները հաղթահարելի են, երբ աշակերտը տարվա ընթացքում պարբերաբար զբաղվում է խնդիրներ լուծելով:

Եվ այն փաստը, որ տարեցտարի մրցանակակիրներն ավելանում են,



նշանակում է՝ մաթեմատիկա մշտապես պարապող երեխաներն ավելանում են: Մրցանակները երեք կարգի են՝ հաղթողների, լավագույն արդյունքներ գրանցած երեխաների համար և հատուկ (խրախուսական) մրցանակներ: Այս տարվա հայկական «Կենգուրուի» հաղթողները 4-ն են. 3-ը՝ 4-րդ դասարանից, մեկը՝ 8-րդ, բոլորն էլ՝ Հայաստանի մարզե-

թից: Լավագույն համարվում են 3-4-րդ դասարանների այն երեխաները, որոնք 96 հնարավորից հավաքել են 604 միավոր և 5-12-րդ դասարանների մեջ նրանք, ովքեր 120-ից հավա-

խրախուսական մրցանակ ստացան դպրոցի մասնակիցների մեջ ամենալավ արդյունք արձանագրած երեխաները: Բոլոր երեխաները, անկախ հավաքած միավորից, ստացան հավաստագիր:

Բոլոր դպրոցները, ինչպես նաև մրցանակակիրները ստացան «Կենգուրուի» խնդրագիրք՝ լուծումներով: ՀՀ 49 մարտարության կողմից այս համարվում է ուսումնաօժանդակ ձեռնարկ:

Հայկական «Կենգուրուի» հորելյանական տարում կազմակերպիչներն անակնկալ էին պատրաստել. լավագույն արդյունքներ ցույց տված երեխաներն առաջին անգամ ստացան «Կենգուրուի» խորհրդանիշ համարվող փափուկ, գեղեցիկ, հայկական խորհրդանիշներով խաղալիք-կենգուրու:

Ընդհանրապես մրցանակակիրներին՝ Ը. Կարապետյանը նրանց պատգամեց. «Գիտելիքը հարստություն է, գանձ, որը երբևէ ոչ մեկը չի կարող վերցնել: Նյութական արժեքները լավ բան են, ուրախություն, հարմարավետություն են բերում մեր կյանքում: Բայց դրանք անցողիկ են: Այսօր կարող է լինել, վաղը, երբ աշխարհը փոխվի, չլինեն: Մնայունը գիտելիքն է: Բազմապատկեցեք այդ հարստությունը և կհասնեք բարձունքների»:

Սեփ. լրատվություն

# ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՏՈՆԸ ԻՎԱՆՅԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Հինգերորդ տարին է՝ չեն աշխատում դպրոցում և ամեն անգամ նրա մոտով անցնելիս հիշում են Մեծ Լոռեցու «Իմ ընկեր Ես»։ Չնայած դպրոցի դռներն իմ առաջ միշտ բաց են, սակայն սովորություն չունեն առանց հրավիրելու... Իսկ երբ հրավերի են արժանանում, ուրախության չափ ու սահման չի լինում։ Եվ ահա դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի, առաջին դասարանի դասվար Ռազմելա Սարուխանյանի հրավերով դպրոցում եմ։

Այդ օրն Իվանյանի միջնակարգի 19 երջանիկ մանուկներ Հայոց գրերի տոնն էին նշում։ Արդեն գրաճանաչ են, տասը տղա և ինն աղջիկ, զինված Մեսրոպ Մաշտոց Սուրբ ամենամեծի ստեղծած «զինվորներով», յուրաքանչյուր կրծքին այբուբենի մեկ կամ երկու տառ, ծաղկեփնջերով ու փուչիկներով դուրս եկան առաջին դասարանի դասասենյակից և ավագ դպրոցականների բուռն ծափահարությունների և ուրախ զոչյունների ներքո հայարտորեն մտան ծնողներով ու ուսուցիչներով լեփ-լեցուն դահլիճ։ 19 երջանիկներ հպարտ կեցվածքով տեղ գրավեցին Մեսրոպ Մաշտոցի մեծադիր դիմանկարի դիմաց կահավորված սեղանների շուրջը՝ Հայրենիք-Արցախ-Խաղաղություն պատահանները բարձրացրած։ Դպրոցում նոր էին նշել Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեդարձը։ Ահա ինչու թունանյանական ոճով սկսեցին իրենց առաջին «քննությունը»։ Հանդեսը բացում է Արենը, իսկ Ալիշը շարունակում է։

*«Հե՛յ, լսեցեք, ականջ արեք  
Մանուկներին հայ ազգի,  
Սիրուն մայրեր, ուսուցիչներ,  
Լավ ուշք դրեք մեր խոսքին։  
Մենք ամենքս հյուր ենք այստեղ,  
Մեր հարազատ դպրոցում,  
Հերթով գալիս ու գնում ենք,  
Հուշեր թողնում ձեզ բազում։  
Այնուհետև շարունակում է Այուզանան։*

*- Անց են կենում տարիները,  
Դառնում անցյալ՝ գեղեցիկ,  
Բայց գալիս է նոր սերունդը,  
Փոխարինում նախորդին։*

*Գիր են սերտում մանուկները,  
Որ հայ ազգը միշտ ծաղկի,  
Որ մանուկը հայոց ազգի  
Հայոց լեզուն սովորի։*

*Գիրն է անմահ, լավ իմացեք,  
Որ գրվում է դարերդար,  
Երենկ նրան, որի գիրը  
Կապրի հավերժ՝ անդադար։*

*Հե՛յ, լսեցեք, ականջ արեք  
Մանուկներին Իվանյանի,  
Նայեք, տեսեք ինչ ուրախ ենք,  
Տոնն է հայոց գրերի։  
Երջանիկ է այն ազգը,  
Որն ունի իր գիրն ու լեզուն,  
Այսօր մենք ուրախ ենք,  
Որ հայոց լեզու ունենք  
Ու խոսում ենք հայերեն։*

Այնուհետև մենք մյուսին շարունակելով, արտասանում են՝ «Գարունը հայերեն է գալիս», և հնչում է «Հայերեն երգենք» երգը։

Դասվարի այն հարցին, թե ինչ է կատարվում այստեղ, Աննան պատասխանում է.

- Այսօր մենք տոնում ենք Հայոց գրերի տոնը։ Արդեն ավարտել ենք «Այբբենարանը» և կարող ենք գրել գրագետ ու խոսել հայերեն.

Ուսուցչուհին պատմում է հայ ժողովրդի կազմավորման, հայոց գրերի անհրաժեշտության մասին և որ՝ 405թ.

Մեսրոպ Մաշտոց Սուրբ ամենամեծ Աստծո գործընկեր մեր գիրն ստեղծեց, Սեր ազգը կործանման ահից փրկեց Ու մեր ձեռքում հավերժության բանալին դրեց։

Ալիշն ամենայն լռությամբ Մ. Մաշտոցի դերն է կարդում.

*...Ով Մեծ Արարիչ, աղոթքս լսիր,  
Փրկիր հայ ազգիս կործանման ահից  
Սուրբ հոգով օծիր միտքս տանջահար,*

*Գրեր պարզկիր ազգիս ստեղծարար։*

*Ուզում են կերտել տառերը Հայոց,  
Որ ընդմիշտ ապրի սերունդը Հայոց,  
Սուրբ հոգի, իջիր գրչիս ու մտքիս,  
Թև առնեն փրկիչ տառերը ազգիս։*

Երգում են «Այբ-Բեն-Գին»-ը, և աշակերտներին յուրաքանչյուրը ներկայացնում է իր տառը։

Շատ հետաքրքիր էր նաև Հայոց գրերի տոնի երկրորդ մասը։ Ծնողներն ու շի ուշով լսում էին ուսուցչուհու և սաների երկխոսությունը ժողովրդական բանահյուսության մասին։ Երեխաներն օրինակներ բերեցին ժողովրդական բանահյուսության նմուշներից. հեքիաթներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, էպոս-առասպելներ, սուտասելուկներ և այլն։

1958-1959 ուստարում ես բախտ եմ ունեցել դասավանդել առաջին դասարանում, որն ինձ համար առաջինն ու վերջինն էր, այն ժամանակ 7 տարեկանից էինք առաջին դասարան ընդունում, բայց ժողովրդական բանահյուսության շատ քիչ նմուշների մասին խոսք կար, իսկ հիմա... լսում են ու համեմատում՝ կյանքը որքա՞ն առաջ է գնացել... Տիկին Սարուխանյանի այն հարցին, թե սու-



տասելուկներն ինչ են սովորեցնում, Ալեքսանդրը պատասխանում է. «Սուտասելուկները մեզ սովորեցնում են սուտ չխոսել, որովհետև ստին ամմիջապես հակադրվում է ճիշտը, որովհետև՝ «ստի ոտքը կարճ է»։ Լսում են մեր այս թոթովախոս մանուկներին ու մտածում. «Մենք մեր երեխաներին սովորեցնում ենք սուտ չխոսել, իսկ մեր հարևան կոչեցյալը սուտը պետական քաղաքականության հիմք է դարձրել, սուտ պատմություն հորինել և հորինում է ու աշխարհով մեկ Եհովայի վկաների նման տարածում, և նույնիսկ մեր երեխաներին չենք հիշեցնում, որ այդ երկրում սուտն ու կեղծիքն է իշխում, մենք չենք ուզում պղտորել մեր մանուկների մաքուր հոգիները։

Լսում են նաև մեր էպոսի մասին։ Արենը համարձակ ասում է. «Սասունցի Դավիթ» էպոսի հերոս Դավիթը հայ ժողովրդի երազած առևանակ, հզոր ուժի տեր կերպարն է, իսկ Էդիկը լրացնում է. «Դավիթն ազնիվ է ու քաջ։ Նա չի հարձակվում քնած թշնամու վրա, Տիգրանն ավելացնում է.

*Ով քնած է, արթուն կացեք,  
Ով արթուն է, էլեք, կեցեք,  
Ով կեցել է, գենք կապեցեք,  
Չենք եք կապել, ծի թամբեցեք,  
Չի եք թամբել, էլեք, հեծեք,  
Հետո չասեք, թե մենք քնած,  
Դավիթ գող-գող եկավ գնաց...*

Ահա մեր դաստիարակությունը. դեռ դարեր առաջ մեր հերոսը քնած թշնամուն չի վնասել, արդար մարտի է կոչել, իսկ այսօրվա նորեղուկ պետության զինվորական սպան գողեզող մտնում է հայ սպայի սենյակը ու քնած մարդուն կացնահարում ու «հերոսի» կոչում ստանում, իսկ մենք դարձյալ մեր մանուկներին այդ մասին չենք հիշեցնում՝ մտածելով՝ ինչո՞ւ իզուր տեղից այլայլվեն նրանց սրտերը, թող մեր հարևանե-

րը որքան ուզում են, վայրահաչոց տան, մանկապարտեզի երեխայի հոգին էլ թունավորեն՝ ասելով որ իրենց թիվ մեկ թշնամին հայն է, ինչպես իրենց ցնորամիտ նախագահն է բարբառում։

Այո, ճիշտ է ասում Թամարիկը. «Մեր էպոսը սովորեցնում է լինել ազնիվ, արդար, խաղաղասեր ու հայրենասեր, նույնիսկ քնած թշնամուն չհարվածել, քանի որ ժողովրդական ասածն ասում է՝ «Օձը որ օձ է, քնած մարդուն չի խայթում»։

Ծնողները գոհ մնացին նաև «Ծիտը» հեքիաթի բեմադրությունից, որտեղ Ալիշն ու Թամարան, Դավիթն ու Աննան, Տիգրանն ու Սյուզաննան իրենց դերերով ցույց տվեցին, որ կարող են լավ դերասաններ դառնալ։ Վերջում ծնողներից մի քանիսը սրտի խոսք ասացին ուսուցչուհու հասցեին, ի սրտե շնորհավորեցին երեխաներին գրաճանաչ դառնալու առթիվ և նվիրեցին փոքրիկ գրաստիպտակներ։ Ծնորհավորական խոսք ասացին հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Մարտիրոսյանը և դպրոցի տնօրեն Գուրգեն Դուլյանը։

Բոլորն էլ գոհ են Ռազմելա Սարուխանյանի մանկավարժական գործունեությունից։ Ես նրան գիտեմ 1995 թվականից՝ համատեղ աշխատանքից։ Նա օրինակելի դասվար է, մեծ եռանդի տեր, նվիրված ու չափազանց հոգատար իր սաների նկատմամբ։ Փնջային մեթոդիավորման աշխատանքների վերականգնման օրերին բախտ եմ ունեցել ներկա լինել նրա վարած դասերին և քննարկման ժամանակ լսել Նորագյուղից, Սարդարաշենից եկած դասվարների գովեստի խոսքերը, որոնք ասում էին. «Շատ էինք լսել ընկեր Սարուխանյանի լավ աշխատանքի մասին և երազել մեկ անգամ լսել նրա դասը, այսօր մենք համոզվեցինք, որ իրոք, նա վարպետ դասվար է...»։

Երրորդ անգամն է, որ մասնակցում եմ վաստակաշատ ուսուցչուհու կազմակերպած Այբուբենի տոնին։ Տարիներ են անցել, և նկատել եմ, որ մեծ փոփոխություններով է անցկացնում յուրաքանչյուր միջոցառում, ու պարզ երևում է, որ նրա դասարանում ապահովված է կրթական չափորոշիչների բարձր մակարդակ։ Հաճելի զուգահեռություններն այսօրվա 12-րդ դասարանի Այբուբենի տոնին էլ եմ մասնակցել։ Ընկեր Սարուխանյանն այն ուստարվա շրջանավարտների առաջին ուսուցիչն է և այսօրվա առաջին դասարանցիներով ընդունելու է էստաֆետը, սակայն կարող է պատահել, որ 2013-2014 ուստարում արդեն չշարունակի աշխատանքը, քանի որ առջևում թոշակի անցնելու խնդիր կա, և 43 տարվա մանկավարժական աշխատանքով ծանրաբեռնված ուսուցչուհին իր այս տարվա առաջին դասարանը փոխադրելով երկրորդ դասարան, տեսնես որ երջանիկին է բախտ վիճակվելու ընդունել նրա դասավարությունը։ Դե, ինչ արած, ինչպես իր սանիկներն են ասում.

*Անց են կենում տարիները,  
Դառնում անցյալ՝ գեղեցիկ,  
Բայց գալիս է նոր սերունդը՝  
Փոխարինում նախորդին...*

Չնայած ոմանք դժգոհում են, որ թոշակահասակ մանկավարժներին ազատում են աշխատանքից, բայց պետք է այն էլ իմանալ, որ խորհրդային շրջանում կանաչ թոշակի էին անցնում 55 տարեկանից, իսկ տղամարդիկ՝ 60, բազմաերեխատեր կանայք՝ 50 տարեկանից։ Իսկ հիմա կին թե տղամարդ թոշակի են անցնում 63 տարեկանից։ Այնպես որ, այսօրվա թոշակի անցնող ուսուցչուհիներին բախտ է վիճակվել 8-13 տարի ավելի աշխատել, քան խորհրդային շրջանի ուսուցիչները, բայց բացառություններ լինում են և շարունակում են աշխատել...

Այսպես թե այնպես, բարի մաղթանքներ թողնելով սարուխանյանական 1-ին և 12-րդ դասարանցիներին և բազմավաստակ ուսուցչուհուն, մեծ բավականություն ստացած՝ հեռանում եմ դպրոցից։

## Գնահատանք ՄԵՇԱՐՄԱՆ ՄԻՋՈՃԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՂՈՒՆԵՐԻՆ

Օրերս Մարտունու մշակույթի պալատում տեղի ունեցավ մեծարժան ցերեկույթ։ Այդ օրը՝ Վերջին զանգի նախօրեին, ուշադրության կենտրոնում էին դպրոցական օլիմպիադաների հանրապետական և համահայկական փուլերում նշանակալի արդյունքներ գրանցած շրջանի աշակերտները և նրանց ուսուցիչները։ Մեծարժան ցերեկույթին գնահատանքի արժանացան նաև արվեստի, մշակույթի, սպորտի բնագավառում ձեռքբերումներ ունեցած աշակերտներն ու ուսուցիչները։

Միջոցառմանը ներկա էր շրջվարչակազմի ղեկավար Նելսոն Սողոմոնյանը։ Շրջանի 29 աշակերտներ և 26 ուսուցիչներ մեծարվեցին և արժեքավոր նվերների արժանացան շրջկենտրոնի գործարարներ Հենրիխ Բարսեղյանի, Հայասեր Գասպարյանի, Անդրեյ Գրիգորյանի, Էդուարդ Ղազարյանի կողմից։ Ներկա էին նաև բարերարները։

Յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ ճանաչման է հասնում հանճարեղ զավակների շնորհիվ։ Հայ ազգն այս առումով առավել քան բախտավոր է, քանի որ ունի այնպիսի զավակներ, ովքեր հայի պատիվն ու անունը բարձր են պահում, ովքեր աշխարհին ներկայացրել են հային որպես քաղաքակիրթ և բարձր ինտելեկտ ունեցող ազգի։ Այս ուղղությամբ քայլերը սկսվում են դպրոցից։ Դպրոցական տարիներին է հիմնականում դրվում գիտելիքների ու կարողությունների հիմքը, որի վրա հետագայում ձևավորվում է այն ներուժը, որն ի վերջո լուրջ ձեռքբերումների է տանում։

Միշտ էլ մտավոր բարձր կարողություններով օժտված հայ երեխաների կողքին են եղել մեր բարերարները, մեծահարուստները նրանք, ովքեր շահագրգռված են եղել այսօրվա ու ապագայով, ովքեր գիտեին գիտելիքի հարգն ու կարողանում էին այն գնահատել։ Այսօր էլ հաճելի է տեսնել մեր գործարարներին՝ բարձր գիտելիքներով օժտված սովորողների կողքին, խրախուսողի կարգավիճակում։

Այս երեխաները ծնվել ու մեծացել են խաղաղ պայմաններում։ Բարեբախտաբար, նրանց համար պատերազմը լուր ծնողների, տատիկ-պապիկների, ավագների պատմություններում է ու հիշողություններում։ Նրանց բաժին է ընկել իրենց վրա զգալու և վաղն արդեն պատասխանատու գտնվելու պետականաշինության կարևոր գործում։ Աճող սերունդը գիտակցում է որպես կարևորությունը, ինչը նշանակում է պատերազմում, մարտի դաշտում ձեռք բերած հաղթանակի ամրագրում։ Գուցե դրա արտահայտություններից մեկն էլ ենք այն է, որ փորձում են ժամանակին և ճիշտ կողմնորոշում գտնել գիտելիքների հարուստ աշխարհում, սովորել ավելի լավ, ինչի համար պետությունը տարեցտարի լայն հնարավորություններ է ստեղծում՝ նոր, հարմարավետ ու կահավորված դպրոցական շենքեր կառուցելով, հների նորոգումով, բարեփոխումներ մտցնելով կրթական համակարգում։

Շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանը նշեց, որ մեր հետագա հաղթանակների համար պատասխանատվությունն ընկած է վաղվա երկրի ղեկավարների վրա, ինչը պարտավորեցնում է ավելի լավ սովորել, ավելի բարձր գիտելիքներ ձեռք բերել։ Օլիմպիադաներում հաղթանակները համարեց բոլորինս, քանզի յուրաքանչյուրը մաս ունի դրանում։ Մաղթեց, որ դրանք գալիք տարիներին ավելի շատ լինեն, ինչը հպարտանալու առիթ կհանդիսանա։ Խաղաղ պայմաններում ունեցած հաղթանակները համարեց պատերազմի դաշտում հաղթանակների շարունակություն ու այստեղ ձեռք բերած մեծ նվաճումները՝ յուրօրինակ հերոսություն։

Շրջվարչակազմի ղեկավարը, տեղակալը, աշխատակազմի կրթության բաժնի վարիչը, Մարտունու քաղաքապետը բարերարների հետ միասին դպրոցականներին ու նրանց ուսուցիչներին պատվոգրեր ու նվերներ հանձնեցին։

Օլիմպիադայի հաղթողներին իրենց կատարումներով շնորհավորեցին մշակույթի պալատի երգիչները։

Միջոցառումը յուրաքանչյուր տոն էր։ Մեծարվեցին գիտելիքն ու նրա կրողը։

ԲՆՕՐՐԱՆ

ԿԵՐՏԵՆԷ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ, Հայաստան, Արցախ... Այս երեք բառերը միշտ ուղեկցվել են դաժանություն, տառապանք, արյան հեղեղ, կյանքի գնով, անկախության պահպանումը բառերով ու բառակապակցություններով: Ու չնայած դրան, մեր բնութագրական ժողովուրդը միշտ կարողացել է հաղթահարել բոլոր դժվարությունները և դավիճակակերտ զարդարելով զոհված հերոսների շիրմաքարերը՝ վառ պահել նրանց անունները: Բայց օրհասական պահերին, երբ հայ ազգը պետք է դառնա մեկ բռունցք ու միասնական լինի, ցավոք, հայտնվել են ազգադավեր, որոնք միանալով օտարին, խանգարել են մեր հիմնավոր ազգին իր զարգացման ճանապարհին:

Նմանների պատճառով մեր տիգրանմեծյան երկիրը հայտնվեց դժվար կացության մեջ, նրանց պատճառով վերացան Արշակունյաց և Կիլիկյան թագավորությունները, բաժանբաժան դարձանք, ցրվեցինք աշխարհով մեկ ու ցրված ենք մինչև հիմա:

Բայց որպեսզի մեր երկիրը կանգուն մնար, մեր ազգի հայրենասեր քաջորդիները հայապահպանման վեհապանձ գործը հենց մեր ժողովրդի արարման առաջին օրվանից վերցրել են իրենց ձեռքը, երիտասարդների մեջ սերմանել հայրենասիրական ու մարդկային արժանիքներ՝ հային բարձրագույն մտածելակերպով ու խելքով հասցնելով 21-րդ դար:

Մեր ազգի նահապետ Հայկը, սպանելով Բելին, դրեց մեր երկրի հիմքը ու իր որդիներին

և թռնեղին հորդորեց, որ բարձր պահեն Հայաստան անունը, հայրենիքը բարձր դաս են մնացած բոլոր արժեքներից, հորդոր, որը դարձավ հայի միակ ու հուսալի գեները բարբարոս հրոսակների դեմ պայքարում: Եվ այնպես չէ, որ Հայկի ժառանգներն ակամքի հետև գեցեցին նրա հորդորը կամ էլ ձևակերպեցին կատարեցին: Ոչ: Այդ դեպքում մենք հիմա ուղղակի չէինք լինի: Հայն այդ հորդորի իրականացումը դարձրեց իր կյանքի իմաստը մի քանի հազարամյակ շարունակ: Ու թեկուզ միշտ էլ կային դավաճաններ, վախկոտներ ու հայրենիքի արժեքը չհմացողներ, հայը կանգուն մնաց և բարգավաճեց՝ իր հետևից տանելով դրանց, երբեմն նույնիսկ ճիշտ ուղու վրա դնելով:

Հայի գլխին թափվող արհավիրքները տարիների հետ էլ ավելի էին սաստկանում ու դժոխային տեսք ստանում: Եվ դրա գագաթնակետը եղավ 1915 թվականը: Թուրք ռճրագործն այժմ էլ իր գեներն ուղղեց Արևմտյան Հայաստանի բնակչության դեմ և սկսեց իրականացնել ցեղասպանություն: Այդպիսի դաժանության միջով աշխարհի ոչ մի ժողովուրդ դեռ չէր անցել: Բայց հայը դրան էլ դիմացավ ու ճյուղերից և քարերից բռնվելով՝ փրկվեց ամբողջովին արյան հեղեղի մեջ խեղդվելուց և ոտքի կանգնելով էլ ոչ ոք մոր, հոր, որդու և կնոջ մահը չողբացած, կրկին ձեռքը վերցրեց գեները ու կանգնեց թուրք հրոսակների դեմ՝ 1918թ. մայիսին կերտելով ազատ ու անկախ

Հայաստան՝ հայերի դարավոր երազանքը, որը, ցավոք, երկար կյանք չունեցավ, և Հայաստանը ազատվելով բարբարոս թուրքի լծից, ընկավ ստալինյան բռնապետության իշխանության տակ: Եվ երկար ու դաժան 70 տարիների ընթացքում հայը կրկին հալածվեց, կրկին տանջվեց, կրկին պառակտվեց, բայց չկորցրեց իր ինքնությունը, իր պատմությունը:

1988 թվական... Այս տարեթիվը դարձավ մեկն այն տարեթիվերից, որոնք սիրով են պատվում օրացույցի վրա: Հայը, Սպիտակի երկրաշարժի փլատակների կողքին կանգնած, կրկին պիտի մոռանար իր ցավն ու վիշտը և իր ողջ ուշադրությունն ու ներուժն ուղղեր դեպի պատմական Հայաստանի դրախտային ու գողտրիկ անկյունը՝ Արցախ:


Աղբեղանակալ իշխանության կողմից հրահրված պատերազմի ու Արցախյան Արևմտյան Հայաստանի օրինակով հայաթափելու քաղաքականության դեմ իր ողջ հասակով կանգնեց հայը, և սկսվեց մի գոյամարտ, պարտադրված պատերազմ: Հայի համբերության բաժակն արդեն լցվել էր, պետք է վճռական և վերջնական հարված հասցվեր թուրքին ու նրանց կեղծ երկրին: Մեր երկրի անկախությունը վերականգնելու համար հայը կրկին բռունցք դարձավ: Կռվում էին ոչ միայն արցախցիներն ու հայաստանցիները, այլև պատերազմի գույժը լսած ու Արցախ աճապարած

Սփյուռքի հայորդիները: Ավոն և նրա նման շատ-շատերն իրենց կյանքը դրեցին մեր երկրի հիմքում, ու նրանց սխրանքի միջոցով 20-րդ դարի վերջին տասնամյակում մենք ունեցանք երկու անկախ ու հզոր երկիր՝ Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Հայ ազգի պատմության համար բացվեց մի նոր էջ: Ու որպեսզի հայը կարողանա դիմակայել 21-րդ դարի մարտահրավերներին, որպեսզի այլևս չանցնենք պատերազմի արհավիրքների միջով, հայ երիտասարդներին պետք է ճիշտ ուղու վրա դնել, իսկ ճիշտ ուղին երկու տասնամյակ առաջ մեր պապերի կռած հերոսական ոգին է: Պետք է ամուր պահել այդ ոգին, որպեսզի կարողանանք պայքարել ու ապրել, ապրել ու վերականգնել մեր կոխկրտված իրավունքները: Պետք է կարողանանք աշխարհին ապացուցել, թե ով է հայը ու որտեղից է գալիս, որպեսզի նրանք էլ չհավատան թուրքերի կողմից տարածվող ստերին: Պետք է վերակերտենք ինքներս մեզ: Ու դա մենք կարող ենք: Դա է ապացուցում մեր պատմությունը: Չպետք է մոռանալ մեր հազարամյակների պատմությունն ու կերտել նորագույն հազարամյակների պատմությունը՝ ավելի պայծառ ու երջանիկ...

Գառնիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
ԱրՊՀ, Լրագրություն, 1-ին կուրս

ԿՅԱՆՔՆ ԱՆԻՄԱՍ ԿԼԻՆԵՐ ԱՌԱՆՑ ՄԱՅԻ



«Կյանքը կկորցնեք իր իմաստը, եթե չընդհատվեք»: Այս միտքն էր իր համար նշանաբան ընդունել Արցախի անկախության նվիրյալ զավակներից մեկը՝ 2-րդ Պաշտպանական գնդի հրամանատարի տեղակալ, մայոր Հայկ Հակոբյանը, ով ապրեց ընդամենը քսանհինգ տարի, սակայն հասցրեց անցնելի հետք թողնել ողջ Արցախում ու հարազատ Սոս գյուղի դպրոցն իր անունով կոչելու պատիվը վաստակեց:

Հայկն առեղծված էր, ու մենք այդպես էլ չկարողացանք մինչև վերջ բացահայտել ու հասկանալ: Նա Արցախյան պատերազմի այն սյուներից էր, ում վրա հենվում էին, ում ապավինում էին, ումից ուժ էին առնում հաղթանակի, անկախության հանդեպ թերահավատները, իրենց ուժերին անվստահ մարտիկները, վախեցած մայրերն ու կանայք: Նրա հայրենասիրությունն անչափելի էր, անսահման՝ վեր բոլոր կարգի սերերից, անգամ մայրական սուրբ սիրուց: Հայկը սիրահարվեց հայրենիքին դեռ պատանի հասակում ու այլևս մոռացավ ամեն ինչ, ամենքին, անգամ իրեն: Նրա ուղեղին, սրտին, ողջ էությանը իշխում էր հայրենասիրությունը: Շատերն էին դժվարանում հասկանալ նրան, գրեթե՝ ոչ ոք: Չէին հասկանում, բայց հավատում էին ու վստահում:

Հակասական էր Հայկը: Մարտի դաշտում նա դաժան թշնամի էր, անխնայ սպանում էր թուրքին, չէր խղճում, չէր երբեք: Իսկ մարտից հետո գերի ընկած թուրքի միակ պաշտպանն էր դառնում, արգելում յուրայիններին՝ մատով անգամ դիպել: Անգեմ ու անպաշտպան գերին նրա համար դադարում էր թշնամի լինելուց, նա

պարզապես մարդ էր, ում սպանելը ոչ միայն հանցանք է, այլև պատիվ չէ, անբարո է անգամ: Հայկի ջանքերով ազատ էր արձակվում իր իսկ կողմից գերված թուրքը: Երախտապարտ թուրքը խոստանում է պատերազմի ավարտից հետո գտնել Հայկին ու երախտագիտություն հայտնել:

Հայկը խստապահանջ հրամանատար էր մարտի դաշտում, սակայն, բարի ու հոգատար ընկեր՝ ճակատամարտից հետո: Նա, ընդհանրապես, ամեն ինչում ձգտում էր լինել կատարյալ, անթերի: Եթե մարտիկ էս, ապա պետք է լինես բաշ ու անվախ, եթե հրամանատար էս, լինես առաջին գծում, առաջինը մետվես մարտի, պահպանես զինվորի կյանքը:

Եթե ընկեր էս, պետք է նվիրվես ամենացորր, լինես անշահախնդիր, եղբոր պես:

Դպրոցական տարիներին հաճախակի էր մասնակցում օլիմպիադաներին, հասնում հաջողությունների, երազում էր դառնալ բուսաբան: Դեռ մանկուց սիրում էր ծառ տնկել, պատվաստել: Սակայն ավարտեց Երևանի «Մյուզ կոնցերն» իրավաբանական ինստիտուտը:

Հայկն ընկերներ ուներ նաև Երևանում: Նամակագրական կապ ուներ Արտակ Դալլաթյանի հետ, որի հետ դպրոցական էքսկուրսիայի ժամանակ էր ծանոթացել: Հայկն իր նամակներում պատմում էր նոր սկսված Արցախյան պատերազմի արցախցիների մասին: Նա թերևս իր հայրենասիրությամբ վարակեց Արտակին, որը նույնպես դարձավ հայրենիքի նվիրյալ զինվոր: Այսօր նա Երևանի Վ. Սարգսյանի անվան զինվորական ակադեմիայի հրամանատարներից է:

Տարիներ առաջ, 1998թ. հեռուստացույցով իմացավ իր արցախցի ընկերոջ մահվան մասին ու շատ վշտացավ: Նամակով իր ցավակցությունը հայտնեց Հայկի մորը՝ Ռազմելա Իսախանյանին ու պատմեց, որ Հայկի անունը բարձր են պահում այնտեղ սովորող սուսեցիները: Արտակը չի մոռացել իր հայրենասեր ընկերոջը և նրա հիշատակին նվիրված միջոցառում կազմակերպեց սուսեցի ուսանողների մասնակցությամբ:

Մոր համար հաճելի է լսել այս ամենը: Չմայած անտանելի է վիշտը, կորուստը՝ անչափելի ու անվերադարձ, սակայն վշտահար մոր համար ամենաչնչին ուշադրությունն անգամ հաճելի է:

Այսօր մեծ հայրենասերի մայրը մխիթարվում է նրանով, որ զավակի անունը ոչ միայն իր շուրթերին է, այլև սուսեցի յուրաքանչյուր երեխայի շուրթերին, որ դպրոցն իր զավակի անունն է կրում: Այժմ դպրոցն է իր զավակը, դպրոցը, որին ամեն օր իր տան պատշգամբից հայացքով շոյում է այնպես, ասես որդուն է շոյում: Մխիթարանք է նաև այն, որ թող Հայկի անունն է կրում ու սովորում Հայկ Հակոբյանի անվան դպրոցում:

Կյանքը շարունակվում է, չէ՞ որ հենց դրա համար գոհվեց Հայկը: Բայց միևնույն է, այն արդեն անդարձելի փշրված է, փշրված ոչ միայն մոր, այլև միակ ու սիրելի քրոջ՝ Լուսինեի համար:

Լուսինեն պաշտում էր եղբորը, հպարտանում, բայց նաև հրաժարվում հավատալ, որ եղբայրն այլևս չի վերադառնա, իր հոգատար ու սիրառատ եղբայրը, չնայած երբեք ի ցույց չդրեց սերը: Լուսինեն այնպես էր ուզում գրկել եղբորը, համբուրել, գուրգուրել, սակայն Հայկ տղամարդու տեսակը հեռու էր նման կանացի քնքշություններից: Հայկն այլ կերպ էր արտահայտում սերը, արտահայտում էր գործով, հոգսն իր վրա վերցնելով: Կյանքն այնպես էր հեշտ ու թեթև էր, երբ կողքին Հայկն էր ապրում...

Հայկ Հակոբյանն այսօր քառասուն տարեկան կլինի, կլինի գնդապետ, գեներալ կամ մարշալ: Չհասցրեց դառնալ, մնաց հավերժ քսանհինգ տարեկան: Դպրոցի պատին քանդակ դարձավ, հուշատախտակին՝ նկար, գերեզմանոցում՝ արձան, իսկ ապրողներին սրտում ամժառ հուշ դարձավ...

Հայկ, դու քո մահով իմաստավորեցիր կյանքը, գիսաստղի պես մի պահ փայլատակեցիր ու հեռացար, հեռացար, որ վերադառնաս...

Գիսաստղերը երբեմն-երբեմն վերադառնում են:

Ստաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Գ. Սոս

ԻՄ ՀԱՅՐԵՆԻ ԵՋԵՐՔԸ

Հայոց լեռնաշխարհի մի մասնիկն է Աստղաշենը: Գյուղը հետաքրքիր պատմություն ունի, հետաքրքիր պատմական հնություններ ու վայրեր: Գյուղից վերև Սանգյար տեղավայրն է, որը հայտնի է իր ստորգետնյա քարանձավով և բազմաթիվ հետաքրքիր քարերով (աստղեր, ծովային փոքր կենդանիների քարացած մարմիններ, արծվի թև): Վաղուց ճանաչված վայր է դարձել Սանգյարը: Հետաքրքրության համար շատերն են այցելում և հավաքում այդ մասնիկները: Բայց ամեն անգամ մի միտք տանջում է մարդկանց, թե որտեղից են այդ հրաշք քարեր աստղիկները: Եվ գուցե հենց այդ պատճառով գյուղի նախկին անվանումը՝ Դաշբուլաղ (նշանակում է՝ «Քարե աղբյուր»), անվանվեց Աստղաշեն: Սակայն երբևիցե գյուղի պատմությունը չի ուսումնասիրվել: Կարելի է ենթադրել, որ մինչև գյուղություն ունենալը գյուղը եղել է ջրային տարածք, գուցե ծով կամ լիճ: Պարզվել է, բացի աստղերից, կան բարացած ծովային ջրիմուռների, կենդանիների մասնիկներ: Եվ հետագայում կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացել է ցամաք: Եթե հաջողվի գյուղը հրավիրել հնէաբանների, թերևս ուսումնասիրելով տարածքը, կգտնվի հանելուկի պատասխանը:

Հայկական բնօրրան է Աստղաշենը՝ հարուստ եկեղեցիներով,



խաչքարերով և այլ հնություններով: Գյուղը բաժանված է երկու մեծ թաղամասերի: Բնակիչների հավաստմամբ՝ ծորի մի կողմից աղբեղանակալ թաղամաս է եղել: Ընդ որում, դպրոցի աշակերտների զգալի մասը նույնպես եղել են աղբեղանակալներ: Արցախյան շարժման ժամանակ նրանք լքել են իրենց տները և փախուստի դիմել: Արցախյան ազատագրական պայքարում իր ուրույն և նշանակալից տեղն է ունեցել Աստղաշենը: Եվ պատահական չէ, որ գյուղի նահատակված 12 ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողը դարձել է գյուղի պատմության էջերից մեկը: Իսկ գյուղի քաջ տղաները համարվում են 12 աստղերը, որոնք գիշեր ու գոյ երկնքից շողում են՝ լուսավորելով Աստղաշենի երկնակամարը:

Հուսանք, որ Արցախ աշխարհում կտիրի հավերժ խաղաղություն, և նրա գրկում էլ կշենանա ու կզարգանա հայոց պատմական գյուղերից մեկը՝ Աստղաշենը:

Մարիամ ԱՐԱՋԱՆՅԱՆ  
ԱրՊՀ, Լրագրություն, 1-ին կուրս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լ. ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐԸ»՝ ՆԱԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բանասիրության մեջ բազմիցս խոսվել է հայ ժողովրդական բանասիրության, ազգագրության առանձնահատկությունների, միջազգային տարաբնույթ զուգահեռների, լեզվի և ոճի, բարձր գաղափարայնության, պատմական հենքի, ժանրային տեսական հիմնավորումների մասին:

Արցախի ժողովրդական բանասիրությունը հայ ժողովրդական ֆոլկլորի անբաժանելի մասն է՝ իր հրաշք գանձարանով ու անսպասակունքներով: Նրա հավաքման ու հրատարակման գործում մեծ ու անգնահատելի է Բահաթրյան եղբայրների, Մակար Բարխուդարյանի, Երվանդ Լալայանի, Կոնստանտին Մելիք Շահնազարյանի, Սարգիս Իսրայելյանի, Մարգարիտ Գրիգորյանի, Ալ. Ղազիսյանի և մի շարք այլ բանահավաքների ու ազգագրագետների աշխատանքը:

«Յուրաքանչյուր ժողովրդական ժողովրդի չափ թանկ է իմ սրտին» սկզբունքով է արցախցի մտավորական, ճանաչված մանկավարժ, բանասեր, բանահավաք, ազգագրագետ Լ. Չարությունյանը լրացնում բանահավաքների աստղաբույլը՝ հավաքելով ու հրատարակելով բանասիրական-ազգագրական 5 ժողովածու՝ համոզված, որ բանասիրությունն ու ազգագրությունը ժողովրդի կենսագրությունն են, նրա պատմական հիշողությունը, որը դարերի ընթացքում վերածվել է ավանդության, լեզվի, ասացվածքի, սովորության, հեքիաթի ու բանասիրական այլ ժանրերի:

Լ. Չարությունյանի «Նշխարներ Արցախի բանասիրության» գրքերն արցախցի խորհրդածություններից, կենսավորածից, ավանդական սովորությունների, ընտանեկան օջախի, պատմասիրության մտահունչ ակորդներից հյուսված ստեղծագործություններ են, մասունքներ, որոնք իրենց վրա կրում են հողի աշխատավորի քրտինքի բույրը, հայրենի հողին կապված լինելու հավերժական ուժը, արցախցու պատմասիրությունն ու մարդասիրությունը:

«Վեղը շատ չըրչարե: Վեղեն հիշքան շատ չըրչարի, էնքան վեղը քրիտարանումս, վեղեն քաղժոռն էլ տամս պրանես: Ըստի ասին տու էլ աշկը ծակ չի պահիս, ըշտահես էլ քացախ չանիս: Ծառ շատ տնգե, համա չիլ չըղնիս քրիստոսս տունգը՝ պուք տաս, քամուն պերած սերնը տնգիս:

Վրդունդ թըմահեն ծառը տնգիս վուչ, չաշմիշ կընիս, հացըդ պահան չի կենալ, սորվը մատաղը ընթունել չի, կաթըդ կը շաղե... Գաթիդ վրդունդ խոր վեր թողե, վեր տականկլխան փչող քամեն կարեվուչ թա Դյամա դիք տականց պուք տաս»: Սա արցախցու՝ հողին, հայրենի օջախին ամուր կառչելու դարավոր պատվիրան է:

Լ. Չարությունյանի «Նշխարներ»-ի 5 հատորներն էլ ազգագրական, բանահյուսական նյութերի անսպաս ու մնայուն գանձարան են և առաջին հերթին արժևորվում են որպես հարազատ ժողովրդի կյանքը, նիստուկացն ու հիմնավոր բառ ու բանը ամբարող ստեղծագործություններ: Հեղինակի բուն նպատակը մեր պատկառելի ժամանակակից ընդհանրացումը, հավաքումը, դասարանում է՝ գիտական դասակարգմամբ ու հետազոտության բանասիրական քննությամբ: Դրանք տեսական ու գործնական ընդհանրացումներով ներկայացնում են Արցախի ժողովրդի կյանքը, նրա լինելության գաղտնիքը: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել Լ. Չարությունյանի բանասիրական գործունեության, գրի առած արժեքների մասին, սակայն «Նշխարները» հավաքված են կարևոր բանագիտական նյութերով, ազգագրական տեղեկություններով, որոնք խորքային, կառուցվածքային փոփոխություններով անդրադարձնում են իրենց մեջ հայոց կյանքի ու մտքի պատմական տարբեր ժամանակաշրջանների կարևորագույն դրվագները, ժողովրդի բարբերն ու սովորությունները:

Ժողովածուները ստեղծվել են այն համոզմունքով, որ ժողովրդական ստեղծագործությունների հավաքումն ու ուսումնասիրությունը նպաստում են յուրաքանչյուր ազգի ազգային ինքնաճանաչման զգացումի ձևավորմանն ու զարգացմանը, այն խիստ կարևոր է ոչ միայն ազգային պատմության, ժողովրդի կյանքի հետազոտման առումով, այլև գրական լեզվի զարգացման, ժողովրդախոսակցական լեզվի բազմաճյուղ ուսումնասիրման համար:

Ազգագրական լայն ընդգրկում ունի Լ. Չարությունյանի աշխատանքը: Այն հիմնովին ընդգծում է հեղինակի ինքնության, բանասիրական հակումների, բանահավաքական աշխատանքի, ազգագրության գիտակի, գրականագետի ու պատմականության ու արդիականության խաչմերուկներում ճիշտ դիրքորոշում ունեցող բանագետի վաստակը:

Լ. Չարությունյանի բանասիրական-ազգագրական ժողովածուները, մեծ ծառայություն լինելով ազգին ու ժողովրդին, ապացուցում են, որ աշխարհի բանարվեստին շատ բան ունի տալու Արցախի ժողովրդը, որի ստեղծածը հայագիտության մշտափայլ կրթողներ են:

Բանահավաքական աշխատանքը Լ. Չարությունյանին հնարավորություն է տվել ազգագրական նյութերը լուսաբանել մեծ ընդգրկումով: Նրա 5 ժողովածուներն էլ կարևոր աղբյուրագիտական արժեք ունեն նախ և առաջ ազգագրագետների, պատմաբանների, ապա նաև ընթերցող լայն շրջանների համար: «Ֆոլկլորագետը չի կարող չըջանցել ազգագրությունը, եթե ցանկանում է բազմակողմանի ու խորն ուսումնասիրել իր առարկան: Բանասիրությունը և ազգագրությունը սերտորեն կապված են ժողովրդի հետ և երկուսն էլ արտացոլում են նրա պատմական զարգացման ուղին, նրա կյանքն ու պայքարը, մեկը պետական խոսքի, մյուսը՝ ազգագրական, կուլտուր-կենցաղային առանձնահատկությունների միջոցով: Ֆոլկլորի և ազգագրության այսօրինակ սերտ կապն ու նպատակի նույնությունը հրամայաբար պահանջում են ֆոլկլորագետից լինել լավագույն ազգագրագետ, իսկ ազգագրագետից՝ լավագույն ֆոլկլորագետ»,- կարդում ենք Գր. Գրիգորյանի «Չայ ժողովրդական բանասիրություն» գրքում:

Լ. Չարությունյանի ազգագրական նյութերը քաղված են ամենատարբեր աղբյուրներից, ժողովրդից գրառված ու հավաքված է մի պատկառելի բաժին, ստեղծված մի բազմաբանակ, արժեքավոր, յուրատիպ հանրագիտարան, որը վերաբերում է ժողովրդի իրական վիճակին, սոցիալական պայմաններին, աշխատանքի մարդու հոգու տվյալատանքներին, հույսերին ու ձգտումներին: Հայրենի եզերքի բանասաց-բանահավաքների ջանքերով Լ. Չարությունյանը ստեղծել է մի պատկառելի ժառանգություն: Բոլոր նյութերի քննություններում տեսնում ենք թե՛ տեքստաբանություն, թե՛ ժանրերի տեսական հիմնավորում, թե՛ պատմության, թե՛ գրականության, ազգագրության և բանասիրության խորքային առնչություններ: Բանասերի հմտությամբ են մոլորաբան-

ված տեքստերը, ավանդությունները, դարավոր ծեսերն ու սովորությունները:

Ավանդությունները և ավանդական գրույցները վաղուց մտել են ազգագրության, հնագիտության շրջանակները: Նման օրինակների հանդիպում ենք Լ. Չարությունյանի «Նշխարների» գրեթե բոլոր հատորներում: Հեղինակի մոտ դրանք մի դեպքում գետնից են «Ջրույցներ, առակներ, ավանդություններ» վերնագրի տակ, մի այլ դեպքում՝ «Ավանդություններ մեզ հասած տեղեկություններ», որոնց տակ քննարկվում են տարբեր տեղանուններ («Թաքավերեն պալատը», «Իրեք ծառ», «Քուչակավ լցված», «Մեծ Նահատակ», «Պիծի Նահատակ», «Աղջաբեղի», «Քարախայտը, Սռավա կլխեն», Ուլտարան, Ամարասկան, Ամարաս-բաղաք, Աչան, Գերչեն և այլն):

Ազգագրությունը ժողովրդի կենցաղը, սովորությունները, ծագումը, տարաբնակեցումը, էթնիկական յուրահատկությունները, պատմամշակութային առնչությունները հետազոտող գիտություն է: Այս ասպեկտով են գրի առնվել ու մեկնաբանվել բանասիրական-ազգագրական նյութերը: Լ. Չարությունյանը քաջատեղյակ է հայ ազգագրության անցած ճանապարհին: Այդ են վկայում ազգագրական նյութերի հմուտ դաստասումը, ժանրային առանձնահատկությունների, ժողովրդի պատմության տվյալ հատվածի առանձնահատկությունների դրոշմը՝ ներկայացվող նյութի վրա:

Բանասեր-մանկավարժ Լ. Չարությունյանը ծանր է մեր ազգագրության պատմությանը, հայ միջնադարյան մատենագրությանը, որտեղ բազմաթիվ են ազգագրական նյութերը: Այդ են վկայում մամուլի էջերում հրատարակված նրա բազմաթիվ հոդվածներ՝ գրականության, գրականագիտության ամենատարբեր թեմաների, հարցերի շուրջ:

Ազգագրության կարևոր բաժիններից մեկը համարելով բանասիրությունը՝ Լ. Չարությունյանը բացահայտում է նրանց գեղագիտական ֆունկցիան, ընդգծում ծագումնաբանական արմատները, որոնք տարանուն են դեպի ժողովրդի պատմությունը, նրա կենցաղն ու բարքերը: Լ. Չարությունյանի հավաքած, գրի առած բանարվեստի մոլուշները դու-գակցվում են ազգագրությանը՝ հառնալով հայ բանագիտության մեջ եզակի արժեք ներկայացնող հատված, որի ուսումնասիրությունն, անտարակույս, ավարտված չէ: Ավարտված չեն, օրինակ, այնպիսի խնդիրների լուծումներ, որոնք վերաբերում են Արցախի բանասիրության ազգային առանձնահատկություններին, որոշակի կառուցվածքային կապերին, լեզվաոճական հարցերին. «Սխալ կլինեք պնդել, թե հայ բանագիտությունն արդեն լուծել է իր առջև ծառայած բոլոր հարցերը...» գրում է Ա. Ղանալանյանը,- հայ ժողովրդի հարուստ բանասիրության բոլոր ժանրերն ու ստեղծագործությունները, թեմաներն ու հարցերը չէ, որ արժանացել են հավաստի ու անհրաժեշտ ուշադրության: Համեմատաբար քիչ են հայտնաբերված, գրի առնված, ի մի բերված և ուսումնասիրված մեր ժողովրդական մանրապատմությունը, հմայական աղոթքները և այլն»:

Հիրավի, բազմաթեմա և բազմազան է Լ. Չարությունյանի ստեղծագործական աշխարհը: Այն դեռևս չբացահայտված շատ հարցեր ունի՝ կապված բանասիրական առնչությունների, ժողովրդի պատմամշակութային արժեքների քննության հետ:

Քննելով Լ. Չարությունյանի «Նշխարներ»-ի 5 հատորներում գետնեղ-

ված նյութերը, նկատում ենք մի կարևոր հանգամանք. ազգագրական ու բանասիրական նյութերում ակնհայտ պաշտամունքը Աստծո, երկնային մոլորակների հանդեպ: Այդ մասին մանրամասն խոսում է հեղինակը իր գրականագիտական հոդվածներում և, հատկապես, «Նշխարներ»-ի I գրքի առաջաբանում:

- Ղարաբաղցին պաշտում է Աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Հայ աշխատավորը Աստծո անվան հետ է կապում մարդկային բարոյության հույսը և պատեհ առիթով աղաչում, որ մեղքանա և սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա Աստծո գաղափարի մեջ է դրել նաև դեկավարի, առաջնորդի, գորավարի հանդեպ իր իդեալը: Նրա չգոյության մեջ է նա տեսել է իր դարավոր երագանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենդան ա ըլալ, մունք մռնեիս չընք ըլալ, էս մին ըշխարքաս սող-սալամաթ քնիս ընք ըլալ էն մին աշխարքը: Մեռնելը միե՛նգ ա: Մինչև մեռնելը սրտընես ճաքումա»:

Ղարաբաղցին միայն Աստծո հետ չէր «ընկերական», այլև բնության հզոր ու իրական բոլոր ուժերի՝ արևի, լուսնի, գիշերվա, ծովի...

Լ. Չարությունյանը հիշատակում է, որ Ղարաբաղցին հնուց ի վեր աչքի է ընկնում ամուր հիմք ունեցող բարոյականությամբ ու կայուն սովորություններով: Նույնիսկ կանոնարկված էին հայկական կյանքի բոլոր բնագավառները: «Աչկը տեսածն ա սիրուն»,- ասում է Ղարաբաղցին, և սա հենց պահպանել է ընտանեկան կայունությունը:

Ըստ Ղարաբաղցու՝ սերը կծլարձակի տակալան կենակցության ջերմուցում: «Թեկուզ մարդ ու կին, էլի մարթը կնգանան բոլի հմանչի, կնեգը՝ մարթան», կամ՝ «Մեր Օսանեն միտ տնքան օր ու քշեր ըմ ըրալ, քուր-էնթաբը ընք տեսալ»:

Ղարաբաղցին ամուսնանալու հարցում խիստ պահանջկոտ է, վճռական: Նա զանազանում է ներքին և արտաքին գեղեցկությունը, վճռական համարում է ներքինը: «Ղընգոթունը սարու ձյուն ա, սարը բոլի դաշանգ», «Ղաշանգն ասունա՝ ինձ հռնանցե եչի: Տղամարդու համար է ասված՝ «Կնեգ ըրա, քնեք ըրա (լավ մտածիր)»: Համեստությունը, առաքինությունն այն թևերն են, որ կնոջը պետք է պահեն ավանդական բարձրության վրա: Մի գրույցի մեջ կինը մեղադրվում է այն բանի համար, որ երագուն տղամարդուն ներկայացել է թեթևաբար կողմերով. «Վեր իմ ըրագունս տի ըս, քու ըրագունդ հո՛ւնց կընիս»,- ասում է ամուսինը: (Էդ խոսքը մտքումը ասելն էլ ա համոթ):

Պառնագության հաշվառումը խիստ կարևոր է ամուսնական հարաբերություններում: Օխտը պորտը հաշվառելը ամուսնական հարցում պարտադիր է:

«Սերտն ու տոռնը պեք ղարաբաղցե»,- այսպես են անվանել Ղարաբաղցու: Ղարաբաղցու չափավորության մասին է խոսում նույնիսկ այն երևույթը, երբ ասում են. «Վեր մարթին աչքը հացեն յրան ընի, հիվանդանալ չի», «Վեր մին պենան շատ կերեք, կընհամե»: Հացի նկատմամբ պաշտամունքի հասնող սերն է Ղարաբաղցու էությունը: «Մարթին անա մրթալում պիտի կյա»,- ահա Ղարաբաղցու ցանկությունը:

Լ. Չարությունյանը մոռացումից փրկում է արցախյան թռչունների, կենդանիների, միջատների, խոտաբույսերի, ուտեստների, թխվածքների երկար ցանկը: Առաջին հատորի

«Բանածնային բանասիրություն» բաժնում գետնից են ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, խրատներ, օրհնանքներ, կենացներ, սպառնալիքներ, անեծքներ, ժողովրդական խաղեր, հանելուկներ, շուտասելուկներ, հին անձնանուններ և այլն, որոնք վերաբերում են արցախցու սովորություններին, վարք ու բարքին:

Լ. Չարությունյանի բանահավաքական գործունեության մի կարևոր առանձնահատկությունն այդ աշխատանքի ընդգրկած տեղագրական լայն ոլորտն է՝ Արցախ աշխարհը, նրա պատմական հիմնավոր տարածքը, ուր ապրել է հայը և ճակատագրի տերունով տարագրվել՝ իր հետ տանելով իր բանարվեստի նշխարները:

Լ. Չարությունյանի շրջագայությունների, ժողովրդի մեջ հաճախակի լինելու, նրա՝ լսելու կուլտուրա ունենալու, հետաքրքրասիրության դրսևորման արդյունքն է ժողովրդի կյանքի, կենցաղի, վարք ու բարքի, նիստ ու կացի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Հմուտ բանասացն ու ազգագրագետը բացատրություններ ու ծանոթագրություններ է տվել ժողովրդական բանասացների տարիքի, սոցիալական-կենցաղային միջավայրի, բանասիրական բնատուր ընդունակությունների, կատարողական արվեստի վերաբերյալ: Այդ բացատրություններն ու ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ավելի լայն պատկերացնելու բանասիրական այս կամ այն ստեղծագործության բնույթը, ժանրային առանձնահատկությունները:

Ազգագրական նյութերը լուսաբանված են բազմակողմանիորեն ու լայն ընդգրկումով:

Ժողովածուներում հետաքրքիր ազգագրական նյութեր կան ժողովրդական բժշկության, հարսանեծեսների, վիճակախաղերի, բուժիչ բույսերի, բուժիչ աղբյուրների, սուր ծառերի, խաչի պաշտամունքի վերաբերյալ:

Ազգագրական բազմաթիվ նյութեր վկայում են արցախցու բարեպաշտությունը, հյուրանմոտությունը, ազնիվ, պարզ ու անխարդախ հոգին: Անձնական բանահավաքական աշխատանքներին զուգահեռ, Լ. Չարությունյանն իր մտերմներին, ծանոթներին, աշակերտներին համախմբել է իր շուրջը: Նրանք բավականին նյութեր են տրամադրել հեղինակին: Անմշակ այդ նյութերը բանահավաքը խմբագրել է՝ յուրաքանչյուրի մեջ դնելով նպատակամետ վերաբերմունք՝ հայ ազգագրությունը ճիշտ գնահատելու առումով: Ազգագրական նյութերը 5 ժողովածուներում էլ լուսաբանված են բազմակողմանիորեն և լայն ընդգրկումով: Հետաքրքիր է I ժողովածուի «Բառարան» բաժինը: Նախաբանում հեղինակը հավաստում է, որ իր «մեկնությունները հաճախ խուսանվում են նախածանոթ ու նախանշված չափից»: Անկեղծ է ասված, այնքան անկեղծ, որ չես էլ փորձում «մեղք գործել», ասել է թե՛ կասկածել շատ բացատրությունների ճշտությանը: Սա չէ կարևորը: Կարևորը հեղինակի պրպտումներն են բառաբացատրությունների անդաստանում՝ թեկուզ երբեմն վրիպումներով ու սխալներով, մտացածին որոշ ընդհանրացումներով, որի համար և հայցում է ընթերցողի ներողամտությունը: Այնուհանդերձ, մեկնությունները յուրօրինակ բանալի են՝ բացահայտելու երևույթը, սովորույթը, ազգագրային դիմագիծը, դիտելու դրանք ընդհանուր ժողովրդական ստուգաբանության համապատկերում:

Որոշ մտացածին բացատրություններ ստվեր



ՀՈՐԵԼՅԱՆ

ՀԱՆՌԻՊՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂՈՒ ԷՆՏ

խոսել չի ուզում և ասում է. «Ես ինձ զգում եմ դեռ 25 տարեկանի պես...»:

Մայիսի 22-ին Ասկերան քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ գրական-գեղարվեստական հանդիպում բանաստեղծի հետ, որին ներկա էին բանաստեղծներ, Ասկերանի շրջանի ղեկավարությունը, մտավորականներ և ընթերցասեր հասարակայնության ներկայացուցիչներ: Միջոցառումը նախածնունդ էր Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան գրադարանի կոլեկտիվը:

Անվանի բանաստեղծի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված են Արցախ աշխարհի հետ: Նա հայրենի երկրի նվիրյալ է, նրա հոգ-սերով տառապող, նվաճումներով հպարտացող: Արցախցիների համար մեծ պատիվ է ունենալ Վարդան Չակոբյան բանաստեղծ, քաղաքացի, հայրենասեր մի մարդ, ում կյանքը տոգորված է Արցախի բարոյության ու հզորացման վեհ գործով: Այս գիտակցումով և նրա պոետիկ հանդեպ ունեցած սիրով էին ասկերանցիները համախմբվել՝ մեծարելու և շնորհավորելու բանաստեղծի ծննդյան տարեդարձը:

Չակոբյանը հազեցած էր գրողին ուղղված շնորհավորանքներով ու բարեմաղթանքներով:

Ելույթ ունեցան նրա գրչընկերները, ընթերցողները, շրջանի պատասխանատուները:

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանն իր շնորհավորանքի խոսքում նշեց. «Պոետիկան միավորում է մարդկանց: Բայց բանաստեղծ Վարդան Չակոբյանի պոետիկան ոչ միայն կենսարար ուժ ունի, այլ նաև մեզ համար ստեղծում է ոգու տոն: Նա ոչ միայն բա-

նաստեղծական երևույթ է, այլև՝ աստվածային պարզ և մեր ժողովրդի համար: Եվ նա իր գրականությամբ, իր պոետիկայով ստեղծում է ճանաչողության մեծ դաշտ, որ սերունդներին այսօր դասեր ու ավյուն է հաղորդում: Սկսած իր առաջին գրքից, նա ընտրեց դժվար ճանապարհ: Որտեղ քարեր կան, այնտեղ նրա ընթացքն ավելի համառ է: Եվ ինքը հասկացավ, որ որպեսզի տեսնի ճանապարհը, պիտի նայի իր խորքը: Եվ խորքի նկարագրի բացահայտումով մինչև այսօր շարունակում է իր ճանապարհը: Յուրաքանչյուր գիրք մի նոր երևույթ է ընթերցողի համար: Այսօր ասում ենք, որ պակասել է գիրք ընթերցողների թիվը, բայց Վարդան Չակոբյանը բոլոր ժամանակներում էլ ունեցել է և ունի իր ընթերցողը և Արցախում, և Չակոբյանում, և Սփյուռքում: Նրա բանաստեղծությունները մտել են նաև միջազգային ասպարեզ՝ քարզամովելով տարբեր լեզուներով: Այսինքն՝ նա դառնում է համամարդկային արժեք: Այդ ամենը նա ստեղծեց իր պոետիկայի նկարագրով, իր առանձնահատուկ մտածողությամբ, այն յուրօրինակ կողավորումով, որ կարողացավ հայտնաբերել բառաշխարհում, բերեց իր ծրագիրը և իր պոետիկայի հնայքը: Այնպիսի խորքեր հայտնաբերեց, որ համամարդկային արժեք ձեռք բերեց»:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց բանաստեղծի գործունեության մասին պատմող տեսա-շար: Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան դպրոցի աշակերտներն ասմունքեցին Վ. Չակոբյանի պոետիկայից, բեմականացրին նրա երգիծական պատումներից: ԼՂԴ ժողովրդական արտիստ

Քաջիկ Զարությունյանը կատարեց նրա «Կատու» երգիծական ստեղծագործությունը: Ասկերանի ՄՊՍԿ սաները հանդես եկան ազգային պարերով, հնչեցին նաև ժողովրդական երգեր: Ցերեկույթը վարում էր ասմունքող Նաիրա Աղաջանյանը, ով հրաշալի կատարեց բանաստեղծի պոետիկայի գոհարներից:

Չշրջանցվեց նաև Վարդան Չակոբյանի ունեցած մեծ դերակատարությունը Արցախյան շարժման մեջ: Ներկաները դիտեցին Վարդան Չակոբյանի ելույթը ԽՄԿԿ մարզխորհրդի պատմական նստաշրջանում, որով ազդարարվեց Արցախի անկախությունը:

Բանաստեղծ, գրականագետ, հրապարակախոս, շարժման ակտիվիստ Վ. Չակոբյանը նաև գեղեցիկ ընտանիքի հայր է, սիրող ամուսին, հոգատար պապիկ: Ցուցադրվեց տեսաֆիլմ նրա ընտանեկան կյանքի մասին:

«Տաղանդավոր գրողի հետ այսպիսի հանդիպումը հոգևոր սնունդ է հասարակության համար և նպաստում է մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանը»,- իր խոսքում ասաց միջոցառման կազմակերպիչ, Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան գրադարանի տնօրեն Նուրե Կարապետյանը և ասկերանցիների ամուսնից նվեր հանձնեց բանաստեղծին: Վերջինս իր և Արցախի գրողների գրքերից նվիրեց գրադարանին, որը կրում է նրա մտերիմ ընկերոջ, ինչպես ինքն է սիրում ասել, Գաբր ապր (Գուրգեն Գաբրիելյանի) անունը:

Հուլիսած էր բանաստեղծը, և հուզիչ էր նրա խոսքը. «Տունը տուն էլ

առանց մանկան ծիծաղի, և հայրենիքը հայրենիք էլ առանց բանաստեղծության: Եվ ուրախ եմ, որ այստեղ հավաքվելով՝ նորից դիմեցինք նորին մեծություն բանաստեղծությանը: Հայրենիքը հայրենիք է դառնում բանաստեղծությամբ: Արցախյան շարժման մեջ մեծ դեր ունեցան ասկերանցիները: Մենք հաղթեցինք մեր միասնության շնորհիվ: Պատերազմների ժամանակ մենք հաղթում ենք, խաղաղ պայմաններում նույնպես պետք է հաղթող լինենք: Պատերազմի ժամանակ ցավը մեզ միավորում է: Մենք պետք է միասնական լինենք: Այսօր Ղարաբաղի համար չկա ավելի մեծ արժեք, քան մարդը է: Ես ուզում եմ, որ մեր երկիրը երկիր դառնա մեզանով: Ես ուզում եմ, որ մեր արմատներն ամուր լինեն այս հողի մեջ, քանզի մեր արմատը որ հողում էլ տանենք դենք, մեկ է՝ արմատ չի բռնելու: Հայրենիքը հենց դա է: Հայրենիքը մարդն է: Հայրենիք սիրելի՛ նշանակում է սիրել կողքի կանգնած մարդուն, հարևանիդ, ընկերոջդ: Մեր գործով արդարացնենք մեր նահապետների արյան գնով ազատագրված հայրենիքը: Հայրենիքի սերը ամենավեհ զգացումն է: Սիրեցեք հայրենիքը և ձեր աշխատանքով պահեք այն»: Անա արտասանեց իր բանաստեղծություններից և շնորհակալության խոսքեր ուղղեց իր պոետիկան գնահատողներին և սիրողներին:

Շնորհավոր ծնունդդ, սիրելի բանաստեղծ, թող Ձեր բառը միշտ ընթանա իր ճիշտ ուղիով, մարդուն ենք առողջություն, երկարակեցություն, ստեղծագործական նոր որոնումներ:

Ջարիկե ՍԱՌԱՋՅԱՆ

Լույս է տեսել

«ՄՊԱՆԿՈՒՄ Ե ԵՎ ԱՌՅՈՒԹԵԼ ԱՌՅՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԲԵՔ»

«Անմոռաց անուններ, խոհեր, մտորումներ» - այս վերնագրի տակ է ամփոփել վաստակաշատ Ուսուցիչ, 20-րդ դարի վավագույն անկախարժ Միքայել Բայանը Արցախյան ազատամարտի նվիրյալների մասին իր ակնարկներն ու դիմանկարները, հողվածներն ու չափածո գործերը: Հայրենասիրությունն է գրքի առանցքը, որի շուրջը դառնում է ծավալվում են մարտիրոսացած հայորդիների կարճատև կյանքի հերոսական դրվագները, և իմաստավորվում 1988-ից հաշվարկվող մաքառումների ու խիզախումների ժամանակաշրջանը: Գիրքը եկավ լրացնելու մեր Գոյապայքարի տարեգրության մի էջը՝ գրված համեստ ու անխոց զրչի մշակված, բազմավաստակ մանկավարժի կողմից և նպատակ ունի ներկա ու գալիք սերունդներին պահ տալու ոչ միայն վաստակաշատ շնորհակալ գործին նվիրած մանկավարժ-լրագրողը. սա է նրա հավատամքը:

Գրքում տեղ գտած հերոսներից յուրաքանչյուրը յուրովի է պատասխանել մոտենյան հայտնի հարցին. «Չեղո՞ւս ես, ապա ուրե՞մն, տուր ապացույցը, որ աշխարհեն, կյանքեն ու մահեն էլ գորավոր ես դու»: Եվ ապացուցել են նրանք՝ կյանքի երկու տասնամյակը հազիվ բոլորած ջահել-ջիվան որդիները և հասուն այրերը այս հողի... Ապացուցել են՝ Համլետ Հայրիյանը՝ ընդամենը 21 գարուն տեսած «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր, Արմեն Դուրյանը, ով թողնելով ուսումը երևանի Մխիթար Հեթումյան անվան բժշկական համալսարանում, եկավ ու զոհվեց դեռ 20-ը ջրլորած, Միշա Ալթունյանը, ով միացրեց ու մեկը դարձրեց իր ծննդյան և մահվան օրերը, Խաչատուր Լալայանը, ով 92-ի դժոխակ ու օրհասական օրերին հեռավոր Սիբիրից եկավ ու կանգնեց իր երեք եղբայրների կողքին՝ նրանց զարկին հավելելով և իր բազկի ուժը, մի ընտանիքի երկու փված սյունները՝ Մարտիկ և Սեյրան Սարգսյանները՝ մեկը 24 տարեկան, մյուսը՝ 18... Ցավակիրեն շատ են

նրանք՝ «կյանքն իրենց մահով ետ զնածները և իրենք իրենց չփրկածները» (Ռ. Ռոժդեստվենկո): Գրքի հեղինակը շատերին անձամբ է ճանաչել, ունեց նաև դասավանդել, մի մասին էլ ներկայացրել է նրանց մարտական ընկերների ու հարազատների հուշերով: Անթաքույց հպարտությամբ, խորին երախտագիտությամբ ու սրտի կսկիծով է գրում ոչ միայն հայրենի Մեծ Թաղերի, այլև Տոդի, Բանաձորի, Դրախտիկի, Շեխերի, Բերդաձորի, Ստեփանակերտի, մի խոսքով՝ արցախածին քաջորդիների մասին: Գրքի հերոսները ոչ միայն զոհված, այլև անհայտ կորած ազատամարտիկներն են և պատերազմի թոհուրոհի միջով անցած ու այսօր մեր կողքին ապրող, երկիր պահող, հայրենիք շենացնող նախկին զինվորները: Քանի՞-քանի լուսե ճակատներ հանգչեցին այս հողին, քանի՞-քանիսի արյամբ ոռոգվեց ու սրբացավ այն, քանի՞-քանիսը չտեսան հայ Ոգու և Ձենքի հաղթանակը:

Ահա նրանցից մեկը՝ Շեխեր գյուղից «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր Գավրիլ Միրզոյանը: Հինգ զավակների հայրը և գյուղական դպրոցի համեստ ուսուցիչը պատերազմի տարիներին վաշտի հրամանատարի տեղակալ էր: Իր առարկայի՝ ֆիզիկայի հրաշալի գիտակը, առաջին անգամ ազերական որջի՝ Ղաջարի դեմ կրակ է բացել իր ստեղծած ինքնաշեն «Գորդ» կայանքից: Ձուկվել է Մարտակերտի Սեյտուկան գյուղի մոտ, երբ մայիսյան հրադադարին հաշված օրեր էին մնացել: Գրքում արժանիորեն է ներկայացված նաև իր անունը փառքով պսակած ստեփանակերտցի հրամանատար, ավագ լեյտենանտ, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Կամո Դանիելյանը, ով զոհվել է Քյաթուկ գյուղի պաշտպանական մարտերում: Նա սիրում էր կրկնել, որ այս կռիվը պատվի կռիվ է, ու մենք պարտվելու իրավունք չունենք: Հեղինակը մի առանձին հիացմունքով է պատմում ջրկատի հրամանատար, հետագայում շտաբի պետ, մարտագործողությունների հնուտ կազմակերպիչ, տողեցի Վիգեն Գրիգորյանի մասին, ով շրջանում պարտաճանաչ ուսուցիչ և խտապահանջ տնօրենի համբավ էր վայելում: Իսկ Տոդի գումարտակի հրամանատար, առյուծափրստ հերոս Արմեն Գասպարյանը (Արմենյո) ասես հին վիպաերթից մեր օրերը հասած դյուցազուն լինեք: Նրա մասին լե-գենդներ էին պատ-

մում ու երգ հյուսում, իսկ նրա անունը թշնամուն ախ ու սարսափ էր ազդում: Այն բախտորոշ օրերին, երբ Տոդը վերածվել էր թշնամու ավազակաորջի, երբ տեղացի ազերներն ու օսմականները, ձեռք ձեռքի տված, փորձում էին գյուղը մաքրել հայերից, Արմենը արժանի դաս տվեց մոլեռանդ խուժանին... «Ու մի օր էլ «ՁԻԼ» մակնիշի բեռնատարի ղեկին նստած ադրբեջանցի մի տղա, որին Ֆիզուլիում մշտապես «գրանցված» ԽՄԴՄ ներքին զորքերի պարետատունը ԲՏՐ ու մինչև ատամները զինված զինվորներ էր տրամադրել, հասնելով գյուղ ու տեսնելով հավաքված բուն տողեցիներին, սկսել է ամենավերջին բառերով հայոյել ու սպառնալ, որ իրենք բոլորին կկոտորեն, եթե հայերը, 16 կգ իրենց անհրաժեշտ իրերը չալակած, չհեռանան գյուղից:

- Այս հողը մերն է, դուք իրավունք չունեք մեր հողում ապրելու,- հոխորտացել է նա, - կորե՞ք գնացեք...»:

Դենց այն է՝ ուզում էր ոտքը դնել բեռնատարի ոտնակին, երբ ասես գետնի տակից հայտնվեց Արմենը և պահանջեց, որ «նեղություն չբաշխ» ու մեքենայի դուռը բացի: Մինչ լկտի ազերին ձեռքը կտաներ ատրճանակին, Արմենը մի ճարպիկ շարժումով ինքնաձիգից կրակել է ուղիղ ճակատին, հետո կրակահերթով բառատել նրա մարմինը, ինչպես թուրքերն էին բառատել նորածին հայ մանկանը այդ դեպքից ամիսներ առաջ, գիշերով մտնելով իրենց համազյուղացու՝ Միսաբ Դանիելյանի տունը, կացնահարել ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նորածին երեխային կտոր-կտոր արել: Ականատեսների վկայությամբ՝ հաջորդ օրը պարտեղ բեռնատարը քշել-բերել է գյուղամեջ ու ասել՝ «Այս մեքենան այն հերոսինն է, ասեք, թող գա իր ավարը տանի»: Հիդրավի, առյուծ էր նա, առյուծի պես էլ կռվի դաշտ էր մտնում՝ արհամարհելով մահն ու գնդակը: Երեք անգամ վիրավորվեց ու, դեռ վերբերող չսպիացած, նորից գեղե վերցրեց: Ավաղ, Նորձանի համար մոկող մարտը վերջինը դարձավ հերոսի համար, և նա զոհվեց, երբ ընդամենը 32 տարեկան էր: Արմենն ու նրա նման բյուրավոր հերոսներն անմահ են, վկան՝ այս գիրքն ու մեծն Նժդեհի այս ճշմարտությունը. «Սպանվում է և առյուծը, առյուծությունը՝ երբեք»:

Մելանյա ՄԻՆՈՋՅԱՆ

ԽՈՍՔ ԵՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ



Լրացավ լավ մարդ, սրտացավ ընկեր ու բարի խորհրդատու, բուրդի կողմից սիրված ու հարգված, բանիմաց ուսուցչուհի Միլվա Սարգսյանի ծննդյան 60-ամյակը: Մարդ, որին ի վերուստ է տրված ուսուցչի վեհ կոչումը, անձնավորություն, որն իր գիտակցական կյանքի 37 տարիները սիրով ու մեծ պատասխանավորությամբ նվիրել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վսեմ գործին: Ուսուցիչ, որի յուրաքանչյուր դաս գեղեցիկ ստեղծագործություն է՝ մասնագիտական, մանկավարժական և մարդկային ամենաբարձր հատկանիշներով:

Ծնվել է 1953թ. մայիսի 18-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1970թ. ավարտել է Ստեփանակերտի հ. 3 դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

1975թ. ավարտելով համալսարանը՝ աշխատանքային գործունեությունն սկսում է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 դպրոցում և առաջօր աշխատում է:

Սիրելի Միլվա Սարգսյան, Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի ողջ կոլեկտիվն է սրտե շնորհավորում է Ձեզ: Երկար կյանք և ամենայն բարիք:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԵԶՐԱԳԻՏ

ԼՂՆ Աժ ՓՈՒՍԱՆՅՈՒԿ ՎԱՎԱԹԸ՝ ՆՈՐԻՅ ՄԵԾ ԹԱՂԵՐԻ ԴՊՐՈՅՈՒՄ

Մայիսի 14-16-ը Ստեփանակերտի համարակերպական մարզադաշտում կայացավ ԼՂՆ հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-6-րդ դասարանների աշակերտների միջև ԼՂՆ Ազգային ժողովի գավաթի հերթական խաղարկության հանրապետական փուլը:

Մրցումներին, որն անց է կացվում ԼՂՆ Ազգային ժողովի հովանու ներքո, ավանդաբար Մայիսյան եռատոնի տոնակատարության օրերին մասնակցում են Ստեփանակերտի քաղաքային և շրջանային փուլերում հաղթող ճանաչված 3-6-րդ դասարանների սովորողները:

Այս տարի հանրապետական փուլին մասնակցում էին.

- Ստեփանակերտ քաղաքի հ. 1 հիմնական դպրոցի թիմը,
- Ասկերանի միջնակարգ դպրոցի թիմը,
- Մարտունու շրջանի Բերդաշենի, Սոսի, Գիշու, Դուզե ճարտարի դպրոցների հավաքական թիմը,
- Մարտակերտի հ. 1 ավագ դպրոցի թիմը,
- Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի թիմը,
- Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական և Մուրացանի անվան ավագ դպրոցների հավաքական թիմը,
- Շահունյանի շրջանի Քարվաճառի միջնակարգ դպրոցի թիմը,
- Քաշաթաղի շրջանի Բերձորի հ. 1 միջն. դպրոցի թիմը:

Յուրաքանչյուր դասարանից մասնակցում էին 2 տղա և 2 աղջիկ:

Մրցումների ծրագրով նախատեսված էր՝

- Վազք 60մ (3-րդ դասարանների համար՝ 30մ)
- Վազք 500մ (3-րդ դասարանների համար՝ 4 x 50 մ փոխանցումավազք)
- Թենիսի գնդակի նետում թափավազքից,
- Հեռացատկ,
- Չզուկներ ( աղջիկների համար՝ ձեռքերի ծալում և ուղղում):

Բացման հանդիսավոր արարողության ժամանակ մասնակիցներին ողջունեց և հաջողություններ մաղթեց ԼՂՆ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանը:

Բացման արարողությանը մասնակցում էին Ազգային ժողովի պատգամավորներ, ԼՂՆ կրթության և գիտության փոխնախարար Արմեն Սարգսյանը, ԼՂՆ ԿԱ սպորտի պետական կոմիտեի նախագահ Ռազմիկ Հովսեփյանը, հյուրեր, լրատվության ներկայացուցիչներ:

Այնուհետև թիմերի ավագները ԼՂՆ օրի-

ներգի հնչյունների ներքո բարձրացրին Ազգային ժողովի գավաթի խաղարկության դրոշմը:

Երկօրյա մրցապայքարից հետո հայտնի դարձան հաղթող դասարանները, անհատական լավագույն ցուցանիշներ ցույց տված աշակերտները և վերջապես փոխանցված գավաթի այս տարվա հաղթողը:

Միանգամից նշենք, որ բոլոր չորս դասարանների մրցապայքարում հաղթող ճանաչվեցին Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի դասարանները, որոնք էլ իրավունք նվաճեցին հունիս ամսին մասնակցելու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլին: Հիշեցման կարգով նշենք, որ անցյալ տարի մեր հանրապետության թիմը,



որի կազմում ընդգրկված էին նույն դպրոցի երեք դասարանները և Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 6-րդ դասարանը՝ մասնակցելով ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությանը, գրավել էին երկրորդ տեղը:

ԼՂՆ Ազգային ժողովի փոխանցված գավաթը երկրորդ տարին անընդմեջ նվաճեց Մեծ Թաղերի, միջնակարգ դպրոցի թիմը՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, 2011-2012 ուստարվա լավագույն մանկավարժ Ռոբերտ Ավետիսյանի ղեկավարությամբ:

Թիմային մրցապայքարում երկրորդ տեղը գրավեցին Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի, իսկ երրորդ տեղը՝ Մարտունու շրջանի հավաքական թիմերը:

Ըստ դասարանների, երեք դասարաններում երկրորդ տեղը գրավեցին Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի դասարանները, իսկ երրորդ դասարանների պայքարում՝ Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանը:

Երրորդ տեղերը գրավեցին.

- 3-րդ դասարան - Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոց
- 4-րդ դասարան - Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոց

- 5-րդ դասարան - Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց

- 6-րդ դասարան - Մարտակերտի հ. 1 հոսքային դպրոց

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՆ Ազգային ժողովի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով և արժեքավոր նվերներով: ԼՂՆ Աժ պատվոգրերի արժանացման նաև ըստ դասարանների մրցանակային տեղեր գրաված դասարանները: Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա մարզական հաջողություններ մաղթեց ԼՂՆ Ազգային ժողովի փոխստանակ, ԼՂՆ թեթև աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Արթուր Թովմասյանը:

Հաղթող թիմերին ԼՂՆ կրթության և գիտության նախարարության կողմից շնորհվեցին դիպլոմներ, իսկ հաղթող դասարանները պարգևատրվեցին պատվոգրերով, բոլոր աշակերտներն ու նրանց ուսուցիչները խրախուսվեցին դրամական պարգևով: Պատվոգրերով և հուշանվերներով պարգևատրվեցին նաև հինգ մրցածներում լավագույն արդյունքներ ցույց տված աղջիկներն ու տղաները:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՆ կրթության և գիտության փոխնախարար Արմեն Սարգսյանը:

Ըստ դասարանների՝ անհատական հաշվարկով հաղթող ճանաչված աղջիկները և տղաները պատվոգրերի և դրամական խրախուսանքի արժանացան ԼՂՆ ԿԱ առընթեր սպորտի պետական կոմիտեի կողմից: Պարգևատրումները կատարեց բաժնի վարիչ Արթուր Ավանեսյանը:

Ուրախալի է այն փաստը, որ աշակերտների կողմից ցույց տրված արդյունքները զգալիորեն բարձր էին նախորդ տարիների արդյունքներից, որը նշանակում է՝ թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները ավելի մեծ պատասխանատվությամբ են նախապատրաստվում այս կարևոր ու ավանդական մրցումներին:

Մեկ անգամ ևս շնորհավորենք Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի աշակերտներին և նրանց ուսուցիչներին այդ մեծ հաղթանակի համար ու ցանկանանք նույն հաջողությամբ համրես զան ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում և նվաճեն ՀՀ Աժ փոխանցված գավաթը՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ մեր աշակերտներն արդեն ունեն նման մրցումների փորձ ու հնարավորություն:

Մուրադ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՎԵՐԶԻՆ ԶԱՆԳ

Այսօր բաժանման օր է մեզ համար, եվ մենք տխուր ենք, ծանր է ու դժվար, թե ինչպես անցան տարիները շուտ, Կարծես երեկ էր՝ փոքր էինք, անփույթ:

Սակայն տարիներն իզուր չեն անցել, Դաստիարակվել ենք և ամուր կոփվել, Պարտական ենք մեր ուսուցիչներին եվ շատ սիրելի մեր ծնողներին:

Մեր շատ սիրելի ուսուցիչներ հարազատ, Մենք երջանիկ ենք ձեզանով, հպարտ, Շատ հարազատ եք դարձել մեզ համար, Ձեզ չենք մոռանա, կհիշենք երկար:

Դուք մեզ տվել եք կյանքի դասերը, Մեզ վերաբերող ուրույն մասերը, Իրոք, հրաշք է կյանքը մեզ տրված, Որ պարզել է Արարիչն Աստված:

Մենք խոստանում ենք լինել անվանի, Մեր ազգի համար անձինք պիտանի, Որքան կարող ենք, ամեն ինչ կանենք, Մեր հերոս ազգին արժանի լինենք:

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մեր սիրելի ուսուցիչներ հարազատ, Ողջ հայերս ձեզնով ուրախ ենք, հպարտ, Որ գիտուն եք և խելացի, և անճառ, Համեստությամբ Մարդ եք մեծ ու մեծատառ:

Որքա՛ն եք դուք չարչարվել ու տանջվել, Ցավոք, դա շատ քչերն են հասկացել, Ամեն մեկի ցավն իրենն է ցավալի, Պայքարել եք մեր այս կյանքում ցավով լի:

Շատ հաճելի հուշեր ունեն իմ սրտում, Դպիրներիս հարգանքով եմ միշտ հիշում, Այն ժամանակ, ցավոք, մենք չենք հասկացել, Մեծությունը ափսոս, որ չենք զգացել:

Փռք ու պատիվ ձեզ բոլորիդ, դպիրներ, Դաստիարակեք ազգի համար կտրիճներ, Ազգն ուժեղ է գավակներով քաջազուն, Դուք դարձել եք վարար գետի հորդ ակունք:

Վուրդյա ԲԱԲԱՅԱՆ  
Շուշիի Դազանչեցոց տղամարդ վերակառուցող գլխավոր վարպետ

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐԸ»՝ ՆԱԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6 չեն ձգում գիտնական-բանասերի պրպտուն մտքի, ստեղծագործական երևակայությամբ կատարած հայտնագործությունների վրա: Առավել՝ խորհելու տեղիք են տալիս:

Կարևորն այն է, որ Լ. Հարությունյանը կարողանում է բացել պատմական անցյալում Արցախի կյանքում ճակատագրի բերումով տնտեսական, առավել ևս՝ քաղաքական իրավիճակների վրա դարերի ընթացքում ծանրացած վարագույրը, հետաքրքիր մեկնություններով բացահայտում է հայ ժողովրդի արցախյան հատվածի հուշարձանների ներքին գաղտնիքները՝ կապված հոգևոր ու նյութական արժեքների ճանաչողական ու դաստիարակչական նշանակության հետ:

Նշանակալից են Լ. Հարությունյանի կողմից կատարված պատմական, աշխարհագրական, կենցաղային միջավայրի նկարագրությունները և միաժամանակ կատարվող ստուգաբանությունը: Լ.Հարությունյանը պե-

ղեց, ուսումնասիրեց հայրենի լեռնաշխարհը, ճանաչեց հայրենի ծառը, թուփը, շենը, ձորը, պատմական կրթողը, մոտիկից շփվեց ժողովրդի հետ, ուսումնասիրեց նրա կենցաղը, միատուկացը՝ հրապարակ հանելով 5 հատորանոց աշխատություն՝ հայ ժողովրդի Արցախի հատվածի բանավոր ստեղծագործության գանձերը և իր արժեքավոր լուսնա ներդրեց հայ բանագիտության մեջ: Լ. Հարությունյանի «Նշ-խարների» բանահյուսական ու ազգագրական արժեքն առաջին հերթին հետևյալում է.

«Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փոքրիկ, չնչին թվացող մի աղվանագ, լինելու է միակ ու թանկագին, մեր ազգուտակի հիշատակի պես սիրելի»,- գրում է Լ. Հարությունյանը: Բոլոր ժողովածուներում էլ մենք տեսնում ենք հեղինակի անսրող սերը, հարգալից վերաբերմունքը բանահավաքչությանը, ազգագրությանը զբաղվող մարդկանց հանդեպ:

Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորակից դուրս չի մնացել հայրենի Արցախի կյանքին ու կենցաղին վերաբերող ազգագրական որևէ դրվագ, որի գիտական, բանահյուսական արժեքն անչափ մեծ է: Ըստ հեղինակի՝ «հայ ժողովրդին ունի ազնվատոհմիկ պատմություն: Նա ի սկզբանե սուտ ու կեղծիք չի խառնել իր պատմությանը»:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի սովորություններն ու վարքբարքն իրենց ակունքներով մաքրամաքուր են ու ժողովրդական: Ահա թե ինչու բոլորի կողմից ընդունված են ու սիրելի:

Հայ ժողովրդական բանահյուսության, ազգագրության ուսումնասիրությունը ազգային ինքնաճանաչողության զարգացման գործն է, նաև՝ Արցախի հնագույն պատմությունը աշխարհին հաղորդելու միջոց:

«Ի ծննդե մերված եմ քո ոգու գեղեցկությանը, ինչպես Արևին: Հավիտենական հայ, հավիտենական Արև»,- գրում է բանահավաք-

ազգագրագետ, նաև մանկավարժ ու բանագետ Լ. Հարությունյանը:

Արցախցին գիտի իր բառ ու բանի արժեքը: Ահա թե ինչու իր խոսքն ու գրույցը գրի առնողին միշտ էլ օրհնել է՝ «Պերանդ քաղցր կենա: Ներակ տեսնամ Աստված հար-հավիտենական կյանք տա քեզ, աշխարքս քզանավ լիա-նա...»:

Լ. Հարությունյանը հասցրեց գրել իր 5-րդ գիրքը, այն համոզմունքով, որ մահվանից հետո հիշատակը չի թառամի: «Հուսով եմ, որ պետք կլինեն իմ ժողովրդին մահվանից հետո էլ»,- գրում է Լ. Հարությունյանը: Երիցս ճիշտ է ասված: Գործն է անմահ...

Անահիպ ԱԹԱՅԱՆ  
Արցախի պետական համալսարանի հայ գրականության և լրագրության ամբիոն

<p><b>ԼՈՒՍԱՐԱՐ</b> Իմ քաղաքի՝ ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՍՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ <b>«Լուսարար»</b> ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru</p>	<p>Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրանակ՝ 3171: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.05.2013թ.:</p>
--	--	---	---	--

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: